

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՊՆԻՔ ԱՌԻՅԱԿԵԱՅ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱԼ, ՀԱՅԱՍՏԱՌ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ  
ՀՈՒՄԱՆԻՏԱՑՔԵԼԱԶԱՆԵՆԻ ԳՐԹԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐԹԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՍՄԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀՈՅՔԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՈՂՆԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:  
ՑԱՆԿԱԿՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՁ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

**Էլեկտրոնային տեղեկատվական  
աղբյուրների օգտագործումը**

ԵՐԵՎԱՆ-2009

**ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ**

**ԷԼԵԿՏՐՈՆԱԿԻՆ ԵՆԴԵԿԱՏՎԱԿԱՆ  
ԱՊՔՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

**Տեղեկատու-մեթոդական ձեռնարկ  
( 2-րդ, թարգմ., լրամշակ. հրատ. )**

**Կազմող՝ Է.Սիմոնյան**

**Թարգմանիչ և խմբագիր՝ Գ. Կարապետյան**

**ԵՐԵՎԱՆ-2009  
ԽՆԿՈ Ապրիլ ամսվ. ազգ. մանկ. գրադ.**

ՉՏԴ 681.3/5: 004: 02(07)  
ՊՄԴ 32.973+78.3 g 7  
Է 281

Կազմող՝ Է.Սիմոնյան

Թարգմանիչ և խմբագիր՝  
Գ. Կարապետյան

Է 281 Էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների օգտագործումը: (Տեղեկատու-մեթոդ. ձեռնարկ).– Եր.: Խնկո Ապր անվան ազգ. մանկ. գրադ., 2009.– 64 էջ:

“Использование электронных источников информации в детской библиотеке” 2007թ. ռուսերեն հրատարակության թարգմանության ձեռնարկումը նպատակ ունի մայրենի լեզվով ներկայացնելու մի մեթոդական տեղեկատու, որն ընթերցողին կօգնի տեղեկատվական միջավայրի և տեղեկության աղբյուրների զարգացմանը զուգահեռ յուրացնել տեղեկատվության ոչ ավանդական միջոցները:

Ձեռնարկը հասցեագրված է գրադարանային, մշակութային և ուսումնական հաստատությունների՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ոլորտում պատրաստվածության տարբեր մակարդակ ունեցող աշխատակիցներին:

ՊՄԴ 32.973+78.3 g 7

ISBN 978-9939-813-01-1

© Խնկո Ապր անվ. ազգ. մանկ. գրադ., 2009թ.

## Ներածություն

Քաղաքակրթության զարգացման պատմության մեջ տեղի է ունեցել մի քանի ինֆորմացիոն հեղափոխություն: Նրանցից յուրաքանչյուրը տեղեկությունների մշակման ոլորտի արմատական փոփոխությունների արդյունքում հանգեցնում էր հասարակական հարաբերությունների վերափոխմանը: Նման ձևափոխությունների հետևանքով հանկարծ մարդկային հասարակությունը ձեռք է բերում նոր որակ:

Առաջին ինֆորմացիոն հեղափոխությունը կապված էր գրի գյուտի հետ, որը հանրային հարաբերությունների բնույթում հանգեցրեց վիթխարի քանակական և որակական թռիչքների. գիտելիքները սերնդեսերունդ փոխանցելու հնարավորություն առաջացավ:

Երկրորդը (XVI դարակես) գրքի տպագրության գյուտն էր, որն արմատապես փոխեց մշակույթը և հասարակության գործունեության կազմակերպումը:

Երրորդ հեղափոխությունը (XIX դարավերջ) պայմանավորված էր էլեկտրականության գյուտով, որի շնորհիվ առաջացան կապի տեխնիկական միջոցները (հեռագիրը, հեռախոսը, ռադիոն), որոնք թույլ էին տալիս մարդկանց գործնականորեն փոխանցել և կուտակել ցանկացած ծավալի տեղեկություն:

Չորրորդը (XX դ. 70-ական թթ.) պայմանավորված էր միկրոպրոցեսորների տեխնոլոգիայի և անհատական համակարգչի ի հայտ գալով, որը հասարակության զարգացման համար ևս մեկ շարժառիթ էր: Ստեղծվեցին և սրընթաց զարգանում են համակարգչային ցանցերը, տվյալների փոխանցման համակարգերը (տեղեկատվական հաղորդակցման ուղիները):

Համակարգչային տեխնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումով է պայմանավորված մարդկության զարգացման նոր փուլի թևակոխումը: Ստեղծվում է տարաբնույթ տեղեկությունների օգտագործման վրա հիմնված նոր տիպի հանրություն, որն ստացել է «ինֆորմացիոն» կամ «գիտելիքների հասարակություն» անվանումը: Նոր հասարակության կերտումը մի-

ջազգային կազմակերպություններին բազմաթիվ խնդիրներ է առաջադրում:

Վերջին տարիներին ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի նման միջազգային կազմակերպությունների գործունեության կարևորագույն խնդիրն է համարվում ինֆորմացիոն հասարակության մեջ յուրաքանչյուր մարդու կյանքի նոր պայմաններին պատրաստելու միջոցառումների ապահովումը՝ անկախ սոցիալական կարգավիճակից, տարիքից և բնակության վայրից: Այս միջոցառումների անհրաժեշտությունը սերտորեն կապված է մարդկանց կյանքի վրա գիտատեխնիկական առաջընթացի ազդեցության բնույթի փոփոխության հետ:

XX դ. վերջում զգալիորեն աճել է տեխնոլոգիաների փոփոխության արագությունը արտադրության, արտադրանքի և որոշակի ծառայությունների մատուցման մեջ: Դարասկզբում և նույնիսկ դարակեսում նման փոփոխություններն ընթանում էին մի ժամանակահատվածում, որը նշանակալիորեն գերազանցում էր մեկ-երկու սերնդի կյանքի տևողությունը: Այսօր՝ մարդկության պատմության մեջ առաջին անգամ, ապրանքների և գաղափարների «սերունդը» փոփոխվում է ավելի արագ, քան մարդկանց սերունդը. միաժամանակ արմատապես փոխվում է բնակչության մեծամասնության կենսակերպը: Աճում է յուրաքանչյուր քաղաքացու՝ որակավորումն անդադար բարձրացնելու, գիտելիքները թարմացնելու, գործունեության նոր տեսակներ յուրացնելու պահանջը: Փոխվում է կրթության մոդելը. «կրթություն ամբողջ կյանքի համար» հնացած նշանաբանին փոխարինելու է գալիս նոր՝ «կրթություն ողջ կյանքի ընթացքում» նշանաբանը: Էականորեն սկսում են տարբերվել այսօրվա և ապագա սերունդների վարքագծի մոդելները:

Կրթական և մշակութային հաստատությունների աշխատակիցները ստիպված են իրենց աշխատանքը վերակառուցել՝ գիտակցելով, որ աճող սերունդը պիտի ապրի տեղեկատվական և գիտելիքների հասարակությունում: Այդ հասարակության մեջ մարդու դերը, նրա՝ դեպի տեղեկությունների աղբյուր ազատ մուտքի իրավունքի ապահովումը ներկայումս միջազգային ընկերությունների սկեռուն ուշադրության կենտրոնում են: 2003թ. ժնևում ինֆորմացիոն հասարակությանը նվիրված համաշխարհային վեհաժողովի առաջին փուլում՝ պատմության մեջ առաջին անգամ, աշխարհի երկրների մեծ մասն ընդունեց հիմնական փաստաթղթեր, որոնք սահմանում

էին ինֆորմացիոն հասարակության կառուցվածքը՝ որպես նոր հազարամյակի համընդհանուր խնդիր:

Համաշխարհային մակարդակով ինֆորմացիոն հասարակության հայեցակարգի մշակման ուղղությամբ հաջորդ քայլը հանդիսացավ համաշխարհային վեհաժողովի երկրորդ փուլը, որը տեղի ունեցավ 2005թ. նոյեմբերին Թունիսում: Այդ վեհաժողովում հայտարարվեց, որ նոր հասարակության գլխավոր արժեքը պետք է լինի ոչ թե տեղեկությունը որպես այդպիսին, այլ դրանից օգտվելու կարողությունը, այսինքն՝ գիտելիքները: Բարձր գնահատվեց գրադարանների տեղեկատվական դերը, իսկ գրադարաններն անվանվեցին «ինֆորմացիոն հասարակության սիրտ»:

«Գիտելիքների հասարակության» հայացքների համակարգի հիմքում ընկած են չորս բազային սկզբունքներ.

- ընդհանուր մուտք դեպի տեղեկության աղբյուրներ,
- կարծիքներն արտահայտելու ազատություն,
- հարգանք մշակութային բազմազանության հանդեպ,
- որակյալ կրթություն ստանալու հավասարաչափ հնարավորություն:

Նշենք, որ տեղեկություն հավաքող, մշակող, պահպանող և դասակարգող բազմաթիվ կազմակերպություններից միայն գրադարաններն են տրամադրում տեղեկատվական ռեսուրսներից ազատ և անվճար օգտվելու հնարավորություն: Ստեղծվել են գրադարանային տեղեկատու ցանցեր, և կապի միջոցների շնորհիվ տեղեկություն կարելի է ստանալ մյուս գրադարաններից և տեղեկատվական կենտրոններից:

Տեղեկատվական հասարակության կառուցմանն ուղղված միջոցառումների մշակմանն է միացել IFLA հեղինակավոր կազմակերպությունը: 2002թ-ից IFLA -ի կառուցվածքում գործում է «Ինֆորմացիոն գրագիտություն» բաժինը, որի անվանումը հենց խոսում է նրա անդամների առջև կանգնած խնդիրների մասին: Ի պաշտպանություն ինֆորմացիոն գրագիտության՝ IFLA -ի նախագահական ծրագրում դրվում է գրադարանային աշխատանքների կազմակերպման խնդիրը:



## **Ինֆորմացիոն կուլտուրա (ինֆորմացիոն գրագիտություն)**

Տեղեկատվության տեսակետից կուլտուրական է համարվում այն մարդը, որն ի վիճակի է ընդհանուր տեղեկության մեջ առանձնացնել իրեն անհրաժեշտը. գնահատել և արդյունավետ օգտագործել այն: Ինֆորմացիոն տեսակետից կուլտուրական մարդն ընդունակ է ուսանելու հետագա ողջ մասնագիտական կյանքի ընթացքում:

Մեկ այլ բնութագրմամբ անհատի տեղեկատվական կուլտուրան (ինֆորմացիոն գրագիտությունը) ինֆորմացիոն աշխարհայացքի, գիտելիքների և կարողությունների համակարգի ամբողջությունն է, որն անհատական տեղեկատվական պահանջմունքները՝ ինչպես ավանդական, այնպես էլ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով արդյունավետ բավարարելու ինքնուրույն գործունեությունն է ապահովում:

Ինֆորմացիոն կուլտուրան լայն հասկացություն է և իր մեջ ներառում է և՛ համակարգչային գրագիտությունը, և՛ տեղեկատվական-մատենագիտական կուլտուրան, և՛ ընթերցանության հմտությունները, այսինքն՝ այն ամենը, ինչ օգնում է երիտասարդ ընթերցողին լավ կողմնորոշվել արագ փոփոխվող տեղեկատվական տարածության մեջ:

Տեղեկատվական հասարակության դարաշրջանում չափազանց կարևոր դեր է հատկացվում գրադարաններին: Նոր տեխնոլոգիաներին անցման ընթացքում փոխվել են գրադարանների ավանդական գործառույթները, և առաջացել են նորերը: Այդ խնդիրներով է պայմանավորված գրադարանների նոր դերը տեղեկատվական տարածքում:

«Ժամանակակից գրադարան» հասկացության մեջ մտնում է ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական տեղեկության աղբյուրների ողջ ծավալը: Ինտերնետի լայն օգտագործումը գրադարանում նպաստում է ընթերցողների սպասարկման բարելավմանը, ապահովում է առավել որակյալ և օպերատիվ մուտք դեպի համաշխարհային և ազգային գրադարանային ռեսուրսներ:

Ինտերնետից օգտվողների թիվն արագորեն աճում է, ընդ որում օգտվողների մեջ շատ մեծ է երիտասարդների և կրտսեր տարիքի երեխաների թիվը: Շատերի՝ հատկապես երիտասարդների համար, համացանցը դառնում է տեղեկատվական միջավայր, առանց որի նրանք չեն պատկերացնում իրենց կյանքը: Եվ զարմանալի չէ. քանի որ ինտերնետում կարելի է ռեֆերատների և լսարանային աշխատանքների համար տեղեկություններ գտնել, լսել սիրված երաժշտությունը, գնել դուր եկած գիրքը: Ինտերնետը կարող է հիանալի միջոց լինել հանգստի կամ ընկերների հետ հաղորդակցվելու համար: Մասնակցելով ֆորումներին և հեռուստակոնֆերանսներին՝ կարելի է տարբեր քաղաքներից և երկրներից հաղորդակցվել հասակակիցների հետ. իմանալ՝ ի՞նչ է նրանց հետաքրքրում, ինչպե՞ս են նրանք ապրում, ի՞նչ ֆիլմեր են դիտում և ի՞նչ գրքեր են կարդում: Ինտերնետի համաշխարհային ցանցը չունի աշխարհագրական սահմաններ: Համակարգչի առջև նստած հնարավոր է հիանալ ձյունապատ Ալպերով, տեղափոխվել Խաղաղ օվկիանոսի ափեր կամ այցելել աշխարհի լավագույն թանգարանները: Եթե ինտերնետի կարևորությունը դիտարկենք ուսուցման տեսանկյունից, պետք է հաշվի առնել նրա մեծ նշանակությունը. այն ընդլայնում է ճանաչողությունը, աշխարհայացքը և մի խոշոր դասագիրք-տեղեկատու է հանդիսանում: Հմտորեն օգտագործելով ցանցը՝ գործնականում գիտելիքների ցանկացած բնագավառում կարելի է բարձրացնել ինքնակրթությունը: Դառնալով հեռահար կրթական ծրագրերի մասնակից՝ կարելի է օգտվել գրադարանների, որոնման համակարգերի, տեղեկատուների և հանրագիտարանների համաշխարհային ռեսուրսներից: Ինտերնետի և համակարգչային տեխնոլոգիաների հնարավորությունները կատարելագործվում են այնքան սրընթաց, որ դժվարանում է նոր փոփոխություններին հետևելը:

Ինտերնետը մեր կյանք է մտել, հասել է աշխարհի ամենախուլ և անհասանելի անկյունները: Այնպիսի եզրեր, ինչպիսին են պրովայդերը, վեբ կայքը, սերվերը, չատը հիմնավորապես մտել են հաղորդակցման տերմինալոգիայի մեջ: Ինտերնետի համաշխարհային տեղեկատվական պաշարներն անընդհատ ընդլայնվելով՝ մեր առջև անդադար նոր հնարավորություններ են բացում: Ինֆորմատիզացիայի և «ինֆորմացիոն հասարակության»-ն անցնելու պայմաններ

րում անհրաժեշտություն է առաջանում գիտակցաբար, նպատակասլաց ձևավորել անհատի տեղեկատվական կուլտուրան՝ որպես մարդու ընդհանուր կուլտուրայի բաղկացուցիչ մաս: Հատկապես արդիական է դառնում տեղեկատվական գրագիտության արմատավորումը աճող սերնդի մեջ՝ որպես մասնագիտական և ոչ մասնագիտական հաջող գործունեության, ինչպես նաև ինֆորմացիոն հասարակության՝ գիտելիքների հասարակության մեջ սոցիալական պաշտպանվածության կարևորագույն գործոն: Այդպիսի հանրության մեջ տեղեկույթը ժամանակին գտնելու, ստանալու, համապատասխանաբար ընկալելու և ստացած տեղեկությունը արդյունավետ օգտագործելու ընդունակություններից է կախված յուրաքանչյուր մարդու ճակատագիրը:

Ներկայումս ամբողջ աշխարհում լուրջ ուշադրություն է հատկացվում անհատի տեղեկատվական պատրաստվածությանը: Ձարգացած երկրների գրադարանները որոշակի ջանքեր են ներդնում անհատի ինֆորմացիոն մշակույթի (գրագիտության) ձևավորման գործում, նորովի են գնահատում այդ ուղղության նպատակներն ու նշանակությունը մանուկների և անչափահասների համար: Գրադարանավարները տեղեկույթ գտնելը, գնահատելը և օգտագործելը կազմակերպելու լավագույն թեկնածուներն են համարվում: Նրանք պետք է վերափոխեն իրենց աշխատանքը և ոչ միայն օգնեն գտնել և ընտրել տեղեկության աղբյուրներ, այլև սովորեցնեն՝ ինչպես այն փնտրել և օգտագործել: Այդ պատճառով գրադարանային աշխատողներն իրենք պետք է սովորեն, որպեսզի ձեռք բերեն մանկավարժական հմտություններ կամ կատարելագործեն դրանք և գրադարանային-մատենագիտական գիտելիքների ավանդական քարոզից անցնեն անհատի տեղեկատվական մշակույթի ձևավորմանը:

## **«Երեխաները և տեղեկությունը» հիմնախնդրին առնչվող երեխայի իրավունքները (համաձայն ՄԱԿ-ի պայմանագրի)**

Երեխաներն ունեն կրթություն ստանալու և անհատականության զարգացման իրավունք և հավասար հնարավորությունների հիման վրա այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար (հ. 28, 29) պետք է ապահովվի կրթության և մասնագիտական պատրաստվածության բնագավառում տեղեկատվության և նյութերի մատչելիությունը բոլոր երեխաների համար (հ.28;դ):

Երեխան իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք ունի (հ. 12;1). այդ իրավունքը ներառում է ցանկացած բնույթի տեղեկություն և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունն անկախ սահմաններից (այդ իրավունքի իրագործումը կարող է ենթարկվել որոշ անհրաժեշտ սահմանափակումների (հ.13;1,2):

Երեխաներն ունեն իրենց անձնական, ընտանեկան կյանքի, ինչպես նաև իրենց նամակագրության մեջ միջամտությունից պաշտպանվելու իրավունք. իրենց պատիվը և հեղինակությունը պաշտպանելու իրավունք (հ.16):

Պետությունը պարտավոր է ապահովել երեխաների մուտքը տեղեկությունների և տվյալների տարբեր աղբյուրներ: Պետք է խրախուսի զանգվածային լրատվության միջոցների կողմից այնպիսի տեղեկատվության և նյութերի տարածումը, որոնք նպաստում են մանուկների կուլտուրական և սոցիալական զարգացմանը և քայլեր ձեռնարկի երեխաներին վնասակար տեղեկություններից պաշտպանելու համար (հ.17):

Պետությունը պետք է օժանդակի ծնողներին, օգնի նրանց երեխաներին դաստիարակելու գործում, քանի որ նրանք երեխայի դաստիարակության համար հիմնական պատասխանատվությունն են կրում (հ.18): Պետությունը հարգում և խրախուսում է մշակութային և ստեղծագործական կյանքին մասնակցելու երեխայի իրավունքը և նպաստում է մշակութային և ստեղծագործական գործունեության, ազատ ժամանցի և հանգստի համար համապատասխան և հավասար հնարավորությունների տրամադրմանը (հ.31):

## **Ընթերցողների հետ աշխատանքի մեթոդները Հայաստանի ազգային մանկական գրադարանում**

75 տարի առաջ հիմնադրված Հայաստանի ԽՆԿՈ Ապր անվան ազգային մանկական գրադարանը հանդիսանում է քաղմագործառույթ, տեղեկատու-մշակութային, ուսումնական և կրթական կենտրոն: Հիմնադրման օրվանից գրադարանն իրականացնում է Հայաստանի մանկական գրադարանների մեթոդա-մատենագիտական ղեկավարի գործունեությունը, պարբերաբար հրատարակում է մանկական գրականության հանձնարարական ցանկեր, մեթոդական ձեռնարկներ: Ներկայումս գրադարանի ֆոնդը պարունակում է հայերեն, ռուսերեն և 56 օտար լեզուներով 500000 միավոր, որոնցից 100000-ը աուդիո և տեսանյութեր են: Գրապահոցում պահվում է եզակի նշանակություն ունեցող 500 հնատիպ գիրք:

Հայաստանի մանկական գրադարանը մանկական գրքի հյուրընկալ տուն է: Գրադարանի շենքը և պայմանները նպաստում են, որ երեխաները գրադարանում իրենց հարմարավետ զգան: Մանուկների համար մշտապես ձևավորվում են պայծառ, տպավորիչ ցուցահանդեսներ: Այստեղ հնարավոր է հետաքրքիր գիրք ընտրել, զեկուցում գրել, գրադարանավարի հետ զրուցել ընթերցած գրքի մասին, մասնակցել ստեղծագործական մրցույթի, գրական խաղեր խաղալ: Գրադարանում անընդհատ կազմակերպվում են հետաքրքրաշարժ, հիշարժան միջոցառումներ, հանդիպումներ հետաքրքիր մարդկանց հետ: Տարբեր տարիքի ընթերցողներն այստեղ կարող են բավարարել իրենց ինտելեկտուալ պահանջմունքները: Գրադարանը կանոնավոր կերպով կազմակերպում է «Մանկական գրքի շաբաթը», մասնակցում է քաղաքային տոնախմբություններին: Դպրոցականների համար կազմվում են գրականության հանձնարարական ցանկեր, ժամանակակից թեմաներով անցկացվում են սոցհարցումներ և թեստեր:

Հանդիսանալով ազգային գրադարան՝ ԽՆԿՈ-Ապր անվան մանկական գրադարանն, ինչպես նշվեց, իրականացնում է Հայաստանի մարզային և դպրոցական գրադարանների աշխատանքների

մեթոդական ղեկավարությունը՝ նրանց առաջարկելով գրադարանային-մատենագիտական գիտելիքների տարածմանը և տեղեկատվական մշակույթի զարգացմանը նպաստող աշխատանքի հետևյալ ձևերը.

- անհատական խորհրդատվություններ մատենագիտական որոնման և գրականության հետ աշխատելու մեթոդիկայի վերաբերյալ
- խմբակային խորհրդատվություններ, զրույցներ, սեմինարներ տարբեր երկրների տեղեկատվական համակարգի և դրանից օգտվելու կանոնների մասին
- էքսկուրսիաներ գրադարանի տարածքում
- ավանդական և էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրներից (ներառյալ ինտերնետից) օգտվելու վերաբերյալ գործնական պարապմունքների կազմակերպում:

Հայաստանի մարզային և դպրոցական գրադարանների աշխատողներին օգնելու նպատակով հրատարակվում են գրականության բազմազան հանձնարարական ցուցումներ, ընթերցանության ծրագրեր, գրադարանային և գրադարանագիտական-տեղեկատվական ծառայությունների մասին ուղեցույցներ, հրահանգներ, մեթոդական հանձնարարականներ և այլն:

Համակարգչային գրագիտության հիմունքները մանուկներին և պատանիներին ուսուցանելու գործում Հայաստանի ազգային մանկական գրադարանը հանրապետությունում առաջինն էր: Ավելի վաղ, քան սկսել էր ինֆորմատիկայի դասավանդումը դպրոցում՝ 1991թ.՝ Հայաստանի համար ծայրահեղ դժվար ժամանակահատվածում, գրադարանում բացվեց համակարգչային ուսուցման կենտրոն, որը մեր ընթերցողներին ներկայացնում էր, շատերի համար այդ տարիներին անհրականանալի երազանք թվացող, տեխնոլոգիաների հրապուրիչ աշխարհը:

Ներկայումս գրադարանում հաջողությամբ գործում է մանուկներին համակարգչային գրագիտություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ ուսուցանելու՝ տարբեր տարիքային խմբերին հարմարեցված բազմաստիճան համակարգ:

2000թ-ից սկսած մեր ընթերցողներն ինտերնետ ազատ մուտք գործելու հնարավորություն ստացան: Ինտերնետ-կենտրոն հաճախողները զգացին նոր ծառայության առավելությունը ավանդական

սպասարկման համեմատությամբ. ընթերցասրահներում տեղեկությունների բազմաժամ որոնման փոխարեն արագ արդյունք է ապահովվում փաստաթղթի էլեկտրոնային պատճենի, փաստագրական տեղեկանքի, գծանկարչության և այլ տեսքով:

Հայաստանի ազգային մանկական գրադարանի ինտերնետ-կենտրոնը հագեցած է ժամանակակից համակարգչային սարքավորումներով և կապի արագընթաց միջոցներով: Պահանջվող նյութերի արդյունավետ որոնման համար ինտերնետ-կենտրոնից օգտվողներին օգնություն է տրամադրվում, իրականացվում են տեղեկության տարբեր կրիչների վրա տեղեկույթի գրանցման ծառայություններ: Գրադարանի տնօրինությունը և ինտերնետ-կենտրոնի աշխատակիցներն անընդհատ աշխատում են կենտրոնի տեխնիկական հնարավորությունները կատարելագործելու ուղղությամբ:

Հանրապետությունում առաջին անգամ Հայաստանի ազգային մանկական գրադարանում կազմակերպվեց հեռուստահաղորդակցման կենտրոն ազատ այցելությունների համար: Երկար տարիների ընթացքում Հայաստանի ազգային մանկական գրադարանի ինտերնետ-կենտրոնը դրամաշնորհներ էր ստանում տարբեր միջազգային կազմակերպություններից, այդ թվում նաև միջազգային կրթական հեռուստահաղորդակցման ցանցի IEARN (International Education and Resource Network) ծրագրերին մասնակցելու համար: Երկար ժամանակ գրադարանի ինտերնետ-կենտրոնը Հայաստանում միակ տեղն էր, որտեղ դպրոցականները և ուսուցիչները սովորում էին տեղեկատվական տեխնոլոգիաներն օգտագործել կրթական նպատակներով: Փորձը ցույց է տալիս, որ նման գործնական ուսուցումը ոչ միայն նպաստում է անհատական ունակությունների զարգացմանը, այլև ինքնուրույն ստեղծագործական, հետազոտական, վերլուծական հմտություններ է ձևավորում սովորողների մեջ: Գրադարանից օգտվում են մեծաթիվ այցելուներ՝ դպրոցականներ, ուսանողներ, մանկավարժներ, գրադարանավարներ, մշակույթի և կրթության բնագավառի աշխատողներ:

Գրադարանային ֆոնդերում նոր տեսակի փաստաթղթերի, այդ թվում լսաերիզների և տեսաերիզների, խտասկավառակների, գրադարանավարի համար էլեկտրոնային հրատարակությունների ավելացման հետ համատեղ անհրաժեշտ է յուրացնել տեղեկության հետ աշխատելու ժամանակակից մեթոդները, ձեռք բերել ինտերնե-

տի ռեսուրսները (ներառյալ որոնման համակարգերը, տվյալների բազաները, էլեկտրոնային հրատարակությունները և այլն) արդյունավետ օգտագործելու հմտություններ: Ինտերնետ-տեխնոլոգիաների ակտիվ արձատավորումը կյանքում գրադարանավարներին ստիպեց սովորել, ապա սովորեցնել իրենց ընթերցողներին տեղական և համաշխարհային տեղեկատվական ռեսուրսներում տեղեկություն որոնելու հմտությունները: Առանց այդ գիտելիքների անհնար է կողմնորոշվել գրադարանային և այլ տեղեկույթի բովանդակության մեջ:

Հայաստանի ազգային մանկական գրադարանի ինտերնետ-կենտրոնը ներկայումս ոչ միայն դեպի տեղեկատվական աղբյուրներ արդյունավետ մուտք է ապահովում, այլ միաժամանակ տեղեկատվական մշակույթի դաստիարակության կենտրոն է հանդիսանում իր ընթերցողների համար: Դպրոցական և ուսանողական տարիներին ստանալով տեղեկության որոնման հմտություններ՝ ապագա մասնագետը իր հետագա մասնագիտական գործունեության մեջ կարող է արագ և արդյունավետ գտնել և օգտագործել յուրաքանչյուր տեղեկություն: Տարեցտարի մենք համոզվում ենք, որ տեղեկատվական պատրաստվածությունը մեր ընթերցողներին ինքնուրույն գիտելիքներ ստանալու հնարավորություն է տալիս, ինչը շատ կարևոր է նրանց հետագա կյանքի համար: Ավելացնենք, որ մեր գրադարանում պրակտիկա են անցնում բուհերի ուսանողները, որոնցից ոմանց դիպլոմային աշխատանքները գրվել են գրադարանում անցած պրակտիկայի հիման վրա:

Հայաստանի ազգային մանկական գրադարանը IAML (International Association of Music Libraries), IFLA (International Federation of Library Association), ЛИБКОМ (Информационные технологии, компьютерные системы и издательская продукция для библиотек), IEARN (International Education and Resource Network), «Մանկական և պատանեկան գրադարանները Գերմանիայում. ընթերցանության մասսայականացումը և հաղորդակցման ձևերն ու աշխատանքի մեթոդները» (Մինսկ) միջազգային և ազգային կոնֆերանսների մասնակիցն է հանդիսանում: Մեր աշխատակիցները վերապատրաստման են գործուղվում, մասնակցում են մասնագիտական սեմինարներին՝ UNESCO-ի կողմից ֆինանսավորվող «Տեղեկատվական գրագիտության զարգացման ծրագիր» գրադարանա-



վարների համար կազմակերպվող թրենինգ-սեմինարին, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի կողմից կազմակերպվող սեմինարներին և այլն:

Դպրոցական և մարզային գրադարանավարների համար գրադարանում և տեղերում պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ: Այդ սեմինարների նպատակն է՝ օգնել դպրոցական և մարզային գրադարանավարների մասնագիտական որակավորման կատարելագործմանը, գրադարանում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեթոդների ուսուցմանը: Նմանատիպ միջոցառումները նպատակ ունեն օժանդակել գրադարաններին՝ դառնալու իրենց ընթերցողների համար տեղեկության զանազան աղբյուրներից օգտվելու և ազատ ժամանց կազմակերպելու տարաբնույթ հնարավորություններ ապահովող ինֆորմացիոն-ժամանցային կենտրոններ: Հայաստանի ազգային մանկական գրադարանի կոլեկտիվի զգալի ջանքերն ուղղված են օժանդակելու կրթությանը և ստեղծագործական անհատի դաստիարակությանը: Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների համընդհանուր օգտագործումը գրադարանում նպաստում է մանուկների, պատանիների, ուսուցիչների տեղեկատվական-կրթական պահանջմունքների առավել լիարժեք բավարարմանը և հետագա զարգացմանը:

Կարելի է վստահորեն ասել, որ Հայաստանի ազգային մանկական գրադարանի գործունեությունն ուղղված է իրականացնելու երեխայի տեղեկություն ստանալու և կրթության իրավունքը, հասարակության համընդհանուր տեղեկացվածության պայմաններում նրա իրավունքների պաշտպանությունը:

## **Գրադարանավարի դերը տեղեկատվական գրագիտության (տեղեկատվական մշակույթի) ձևավորման մեջ**

Հայաստանում հասարակության տարբեր խավերի, հատկապես երիտասարդության տեղեկատվական կուլտուրայի ռեալ մակարդակը շարունակում է մնալ անմխիթար: Փորձը ցույց է տվել, որ Ազգային մանկական գրադարանի ինտերնետ-կենտրոնի այցելուների ճնշող մեծամասնության համար բնորոշ է տեղեկատվական մշակույթի ցածր մակարդակը: Բացակայում են համացանցում աշխատելու համար անհրաժեշտ հմտությունները, որը բացասաբար է անդրադառնում ուսումնական կամ մասնագիտական գործունեության արդյունավետության վրա:

Գրադարանում ինքնուրույն տեղեկություն փնտրելու համար անհրաժեշտ է որոշակի հմտություններ ունենալ, օրինակ՝ գրադարանային քարտարանների, ինտերնետում որոնման տարբեր միջոցների հետ աշխատելու կարողություն և պատկերացում՝ ըստ հասցեների ու փաստագրական տվյալների որոնման եղանակների մասին: Այդպիսի հմտությունների զարգացման և ամրապնդման համար անգնահատելի ենք համարում մանկական գրադարանների աշխատակիցների դերը և նրանց՝ տեղեկության որոնումն ու հավաքումը առանձին մարդկանց որոշակի կարիքներին հարմարեցնելու ունակությունը: Այս դեպքում կարևոր է հիշել, որ գործունեության հաջողությունը կախված է մասնագիտական գիտելիքներից, մանկավարժական հմտությունների մակարդակից, ընթերցողի անհատական զարգացման գործընթացի անդադար ուսումնասիրությունից, ինչպես նաև տարբեր տարիքի երեխաների հոգեբանական առանձնահատկությունները հասկանալուց:

Աշխատանքի փորձը և ընթերցողների հետ մշտական հաղորդակցումն ինտերնետ-կենտրոնի աշխատակիցներին հանգեցրել են այն եզրակացության, որ գրադարանների և ուսումնական հաստատությունների ժամանակակից տեխնիկայով զինված լինելը, անհրաժեշտություն լինելով, ոչ միշտ է հանգեցնում սպասելի արդյունքների: Տեղեկատվական աղբյուրների հսկայական հնարավոր-

րությունները հաճախ մնում են չպահանջված ընթերցողների՝ ինֆորմացիոն ցածր կուլտուրայի, իրենց տեղեկութային պահանջները ճիշտ արտահայտելու, արդյունավետ գտնելու, վերլուծելու, անհրաժեշտ տեղեկությունը քաղելու և արդյունավետ կերպով ներկայացնելու անկարողության պատճառով:

Նախկին Միության մի շարք երկրներում հասարակության անդամների տեղեկատվական և մշակութային իրազեկության բարձրացման աշխատանքը կատարվում է պետական մակարդակով: Օրինակ՝ Ռուսաստանում իրականացվում է «Ընթերցանության օժանդակության և զարգացման ազգային ծրագիրը», որը մշակվել է Տպագրության և զանգվածային հաղորդակցման դաշնային գործակալության և Ռուսաստանի գրքային միության կողմից (<http://www.chtenie-21.ru/main/p-42>): Այն նախատեսվում է իրագործել երեք փուլով՝ 2007-2020 թթ. ընկած ժամանակահատվածում: Այն հիմնախնդիրների մեջ, որոնց լուծմանը նպատակաուղղված է ծրագիրը, մասնավորապես նշվում է կրթության համակարգում առաջացած հիմնախնդիրը. «Գոյություն ունեցող համընդհանուր պարտադիր կրթության համակարգը ի վիճակի չէ ամբողջությամբ բավարարել ընթերցողական իրազեկության այսօր անհրաժեշտ մակարդակը, իսկ օժանդակ կրթությունը չի կարող շտկել նրա թերությունները: Արդյունքում՝ հանրակրթական դպրոց ավարտած ռուսների նշանակալի մասը անպատրաստ է արդյունավետ յուրացնելու տեղեկությունների և գիտելիքների՝ գնալով բարդացող և ընդարձակվող հեղեղը»:

Հայաստանում կրթական հաստատությունների շրջանավարտների պատրաստվածության մակարդակը նույնպես տեղիք է տալիս սպասելու ավելին: Մեր ընթերցողներից շատերը շատ անօգնական են իրենց առաջադրանքները կատարելիս. տեղեկություն որոնելու ընթացքում չեն պատկերացնում ցանցի առանձնահատկությունները, չեն տիրապետում տեղեկատվական հարցում կատարելու մեթոդիկային, չեն կարող գրագետ ձևակերպել որոնման արդյունքները:

Ուսանողների և դպրոցականների տեղեկատվական մշակույթի ցածր մակարդակը բնութագրող հատկապես անհանգստացնող հայտանիշ է այն, որ նրանք չեն գիտակցում իրենց անհրազեկությունը տեղեկատվական գործունեության ոլորտում: Նրանք չեն պատկերացնում, թե պրակտիկ գործունեության տարբեր բնագա-

վառներում (ուսման, ինքնակրթության, գիտահետազոտական, ժամանցային և այլն) իրականում ինչպես կարող են օգնել տեղեկատվական ինքնասպասարկման հատուկ գիտելիքները և կարողությունները:

Այս ամենը մեր աշխատակիցներին հանգեցրել է ժամանակակից գրադարանավարի նոր դերի գիտակցմանը. պատրաստել տեղեկությունների հեղեղում կողմնորոշվելու և ստացած գիտելիքներն արդյունավետ օգտագործելու ընդունակ ընթերցողներ: Ինտերնետ-կենտրոնի աշխատակիցների ուշադրության կենտրոնում պատրաստվածության մակարդակի այնպիսի ցուցանիշներ են, ինչպիսին են՝ հարցադրումը ձևակերպելը, հիմնախնդիրը որոշելու կարողությունը, հիմնախնդրի վերաբերյալ տեղեկատվական աղբյուրների շրջանակը որոշելը, տեղեկույթը տարբերակելը և գնահատելը, տեղեկատվական պահանջմունքների բովանդակությունը, տարաբնույթ տեղեկության աղբյուրներին դիմելու մոտիվները, անհրաժեշտ տեղեկություն ստանալու ուղիներին նախապատվություն տալը:

Հարկ է նշել, որ նոր տեխնոլոգիաների գրավչությունը և լայն հնարավորությունները պետք է չստվերեն գրադարանավարի անձի դերը: Այնպիսի անհատական բնութագրեր, ինչպիսին են վարվեցողության ձևերը, համբերությունը, հանդուրժողականությունը, հակասությանը արդյունավետ հակազդելը, նույնիսկ սովորույթները մասնագիտական տեսակետից կարևոր են դառնում: Պետք է հաշվի առնել, որ ինտելեկտուալ և հուզական տեսակետից երեխաները նոր են ձևավորվում, դեռևս ձևավորված չեն պահանջմունքները: Գրադարանավարին հատկապես անհրաժեշտ է դրսևորել մասնագիտական վարքագիծ, հաղորդակցման իրազեկություն, մասնագիտական էթիկա: Անհրաժեշտ է հիշել, որ գրադարանը բաց և անվճար միջավայր է, իսկ գրադարանավարների գործառույթը՝ դառնալ ոչ թե սովորական իմաստով մանկավարժ, այլ՝ խորհրդատու: Գրադարանային սպասարկման գործընթացում անհրաժեշտ է ձգտել իրեն դնել օգտվողի տեղը և թույլ չտալ ոչ մի կողմնակալություն սեփական հայացքների և նախապաշարումների պատճառով: Շատ կարևոր է, որ սովորող երիտասարդների հետ աշխատող յուրաքանչյուր գրադարանավար մշտապես բարձրացնի իր մասնագիտական մակարդակը:

## Որո՞նման ընթացակարգի պլանավորումը

Տեղեկույթը փնտրելու և հավաքելու կարողությունները հենարանային հմտություններ են, որոնք անհրաժեշտ են, որպեսզի հնարավոր լինի ինքնուրույն արդյունքի հասնել: Այդ հմտությունները ներառում են համակարգչային տվյալների բազաներում և ինտերնետում տարբեր միջոցներով որոնման աշխատանքը, այբբենական և թվային հաջորդականությունը հասկանալը: Որոնման հմտություններն ամրապնդում են պահանջում: Տվյալների բազաներում որոնում կատարելու կարողություններ և հմտություններ, կարելի է ասել, չեն սովորեցնում հանրակրթական ուսումնական հաստատություններում: Մեր գրադարանի ինտերնետ-կենտրոնի աշխատակիցներից ջանքեր են պահանջվում, որպեսզի լրացվի այդ բացթողումը: Այդ հմտությունները մեր ընթերցողները կարող են կիրառել տարաբնույթ աշխատանքներում, օրինակ՝ ռեֆերատ, շարադրություն, տեսություն, ռեսուրսների հետազոտություն և ուսումնասիրություն ստեղծելիս:

Այս աշխատության մեջ ի մի ենք բերել ինտերնետ-կենտրոնի գոյության ընթացքում կուտակված՝ մեր ընթերցողներին տեղեկության որոնման ու հավաքման հմտություններին վարժեցնելու աշխատանքային փորձը: Ներկայացվող բնութագրերը հեշտությամբ կարելի է հարմարեցնել առանձին մարդկանց որոշակի պահանջմունքներին:

Որոնման ընթացակարգը արհեստավարժության կարևոր տարր է: Ցանցում ամեն օր նոր տեղեկատվական ռեսուրսներ են ի հայտ գալիս, նոր կայքեր: Վեբ կայքերի քանակն աճում է երկրաչափական պրոգրեսիայով: Նույնիսկ «Դեղին էջեր» նոր տեղեկատուն հնանում է իր ստեղծումից անմիջապես հետո: Ինչպե՞ս կարելի է հետևել տեղեկատվության այսպիսի աճին: Ինչպե՞ս գտնել անհրաժեշտ տեղեկությունը:

Նախորդ բաժնում բերվել են այն պատճառները, թե ինչու արդյունավետ որոնման համար մեր ընթերցողներին հաճախ որոշակի

օգնություն է անհրաժեշտ: Կանգ առնենք որոնման գործընթացի պլանավորման և առաջին քայլերի հետ կապված մի քանի կարևոր հանգամանքների վրա:

Որպեսզի ճիշտ որոշեք որոնման ռազմավարությունը և աստիճանաբար հասնեք նշված նպատակին, սովորաբար պետք է սկսեք որոնման ենթակա տեղեկության բազմակողմանի վերլուծությունից. հետազոտվող հարցի մանրակրկիտ և գրագետ ձևակերպումից, հիմնախնդրի հետ սերտորեն կապված առանձին տերմինների տեսքով առավելագույն քանակությամբ արմատական բառերի, բառակապակցությունների, մասնագիտական բառապաշարի և կլիշեի, ազգանունների խմբի ընտրությունից: Հուշող հարցեր օգտագործելով և ուշադիր լսելով պատասխանները՝ կարելի է ստույգ ճշտել, թե ինչ է անհրաժեշտ օգտվողին:

Հատուկ ուշադրություն է հատկացվում դպրոցականների և ուսանողների՝ ժամանակակից և հուսալի տեղեկություն որոնելու կողմնորոշմանը, ինչպես նաև անճշտությունների կամ ոչ օբյեկտիվ տեղեկությունների բացահայտմանը, առաջնայնության, լիարժեքության, հուսալիության և ձևի չափանիշները որոշելու իմացությունների: Չափազանց կարևոր է նաև քննադատական հմտությունների և գնահատողական մտածողության զարգացումը. այդ պատճառով աշխատակիցների ուշադրությունն ուղղված է այնպիսի կարողությունների մշակմանը, ինչպիսին են՝

- հարցերի ճիշտ ձևակերպումը
- առավել համապատասխան ռեսուրսների առանձնացումը
- բազմատեսակ ռազմավարությունների կիրառումը
- բանականության սահմաններում ժամանակահատվածի սահմանումը
- քննադատական որոշումների ընդունումը:

Տարաբնույթ ուսուցման մեթոդներից ինտերնետ-կենտրոնում ընտրվել է անմիջապես աշխատատեղերում օգտվողների անհատական խորհրդատվական ուսուցումը՝ որպես առավել արդյունավետ մեթոդ: Այդպիսի մոտեցումն առանց բացառության բոլոր օգտվողներին թույլ է տալիս ինտերնետ ցանցում աշխատելու և տիրապետելու տեղեկության արդյունավետ որոնման հմտություններին:

Մասնագիտական պատրաստվածությունը և աճող սերնդի հետ աշխատանքի բազմամյա փորձը մեր աշխատակիցներին թույլ են տալիս անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր անձի՝ կախված նրա տեղեկացվածության աստիճանից, ունակություններից, տարիքից: Յուրաքանչյուր այցելությունից հետո մեր ընթերցողների համար տեղեկատվական աղբյուրների պաշարներն առավել մատչելի և հասկանալի են դառնում:

## **Որո՞նման ծրագրեր և գրացուցակներ**

Ինտերնետում այսօր տեղեկությունների որոնման ինչպիսի՞ հիմնական միջոցներ են գործում:

Ինտերնետում որոնում իրականացնում են որոնման ծրագրերը (search engines)՝ հսկայական տվյալների պահեստները, որոնք պարունակում են միլիոնավոր էջերի պատճեններ (կամ հակիրճ տեղեկություն այդ էջերի մասին): Ցանցում առկա ռեսուրսների մասին տեղեկության հիմնական կրիչներն են **որոնման ծրագրերը և գրացուցակները**:

Որոնման ծրագրերի աշխատանքի որակի հիմնական չափանիշներն են ռեկլամտությունը, տվյալների պահեստի լիարժեքությունը, լեզվի կազմաբանությունը հաշվի առնելը: Որոնման համակարգերն իրենց տվյալների պահեստները համալրելու նպատակով անընդհատ ուսումնասիրում են ցանցը: Սովորաբար այն ավտոմատ կերպով է կատարվում և մարդու կողմից ոչ մի ջանք չի պահանջում: Որոնման ծրագրերի աշխատանքը կայանում է ինտերնետի բոլոր՝ որոնման այդ համակարգին մատչելի հանգույցների և դրանց ամբողջ կապերի ու ճյուղավորումների անընդհատ հետևողական հետազոտության մեջ: Տեղեկությունները մշտապես թարմացնելու նպատակով որոնման ծրագիրը որոշ ժամանակ անց (ամիսը մեկ) կանոնավոր կերպով վերադառնում է արդեն ուսումնասիրված հանգույցներին, որպեսզի հայտնաբերի և գրանցի փոփոխությունները: Ընթերցված ամբողջ տեղեկությունը ավտոմատ կերպով ինդեքսավորվում է, այսինքն՝ ստեղծվում է կենտրոնացված տվյալների պահեստ, որի մեջ կողավորվում են համակարգով ուսումնասիրված բոլոր ինտերնետային էջերը:

Օգտվողից հարցումն ստանալու (հարցման տողի լրացման) դեպքում որոնող համակարգը զննում է ողջ ինդեքսավորված տեղեկությունը և տալիս է որոնման առաջադրանքին համապատասխանող փաստաթղթերի ցուցակը: Գտնված փաստաթղթերը դասավորվում են՝ ըստ բանալի բառերի դիրքի (վերնագրում, տեքստի սկզբում, առաջին պարագրաֆներում) և տեքստում դրանց գործա-



ծության հաճախականության ու տրամադրվում են համարակալված, հաճախ բազմաէջ ցուցակի տեսքով:

Որոնման համակարգերի մեծամասնությունը հարցման մեկ լեզու է սահմանում, սակայն վերջերս նրանցից մի քանիսը թույլ են տալիս որոնումն առաջադրել տարբեր լեզուներով (օրինակ՝ Google.am-ը հայոց լեզվով, Google.de-ն և Google.fr-ը համապատասխանաբար՝ գերմաներեն և ֆրանսերեն):

Որոնում կարելի է իրականացնել նաև գրացուցակներում: Գրացուցակները ինտերնետային հասցեների՝ որոշակի հատկանիշներով խմբավորված ցուցակներ պարունակող տեղեկատուներ են: Որպես օրենք նրանք միավորվում են թեմատիկայով (գիտություն, արվեստ, նորություններ և այլն), որտեղ յուրաքանչյուր թեմա ճյուղավորվում է մի քանի ենթամակարդակների: Ի տարբերություն որոնման ծրագրերի՝ տեղեկությունը գրացուցակում գրանցվում է մարդու նախաձեռնությամբ: Գրացուցակում ավելացված էջը պետք է խստորեն համապատասխանեցվի գրացուցակում ընդունված կատեգորիաներին: Գրացուցակում կարելի է տեղաշարժվել մկնիկի օգնությամբ ( այսինքն՝ պարտադիր չէ որոնման հարցում ձևակերպել): Գրացուցակների առանձնահատկությունը, որպես որոնման միջոց, այն է, որ տվյալների պահեստների ստեղծումը և դրանց անընդհատ նորացումը «ձեռքով» է կատարվում՝ խմբագիրների և ծրագրավորողների կոլեկտիվի միջոցով, և հենց որոնման գործընթացը պահանջում է օգտվողի անմիջական մասնակցությունը, որը մկնիկի թարթումներով ինքնուրույն անցնում է մի հղումի նշոցից մյուսը:

Ներկայացնենք այսօր մասսայական դարձած որոնման համակարգերի և գրացուցակների ցանկը.

#### **Արտասահմանյան որոնման ծրագրեր**

Google	<a href="http://www.google.com/">http://www.google.com/</a>
Yahoo	<a href="http://www.yahoo.com/">http://www.yahoo.com/</a>
AltaVista	<a href="http://altavista-digital.com/">http://altavista-digital.com/</a>
AOL NetFind	<a href="http://www.aol.com/netfind/">http://www.aol.com/netfind/</a>
HotBot	<a href="http://www.hotbot.com/">http://www.hotbot.com/</a>
Excite	<a href="http://www.excite.com/">http://www.excite.com/</a>

Infoseek	<a href="http://www.infoseek.com/">http://www.infoseek.com/</a>
LookSmart	<a href="http://www.looksmart.com/">http://www.looksmart.com/</a>
Lycos	<a href="http://www.lycos.com/">http://www.lycos.com/</a>
Northern Light	<a href="http://www.northernlight.com/">http://www.northernlight.com/</a>
Search.com	<a href="http://www.search.com/">http://www.search.com/</a>
WebCrawler	<a href="http://www.webcrawler.com/">http://www.webcrawler.com/</a>

### **Ռուսական որոնման ծրագրեր**

Rambler	<a href="http://www.rambler.ru/">http://www.rambler.ru/</a>
Яндекс	<a href="http://www.yandex.ru/">http://www.yandex.ru/</a>
Апорт!	<a href="http://www.aport.ru/">http://www.aport.ru/</a>
Mail.ru	<a href="http://www.mail.ru/">http://www.mail.ru/</a>

### **Internet ռեսուրսների գրացուցակներ**

Yahoo	<a href="http://www.yahoo.com/">http://www.yahoo.com/</a>
BigBook	<a href="http://www.bigbook.com/">http://www.bigbook.com/</a>
Excite	<a href="http://www.excite.com/">http://www.excite.com/</a>
Infoseek	<a href="http://www.infoseek.com/">http://www.infoseek.com/</a>

### **Internet-ի ռուսական ռեսուրսների գրացուցակներ**

Russia on the Net	<a href="http://www.ru/">http://www.ru/</a>
Каталог Апорт	<a href="http://catalog.aport.ru/">http://catalog.aport.ru/</a>
Созвездие Internet	<a href="http://www.stars.ru/">http://www.stars.ru/</a>
Weblist.Ru	<a href="http://www.weblist.ru/">http://www.weblist.ru/</a>

Չնայած աշխատանքի նման սկզբունքներին՝ տարբեր որոնման ծրագրերը տարբերվում են ոչ միայն հարցման լեզվով, այլև որոնման շերտերով, փաստաթղթի ներսում որոնման խորությունը, տարբերակման և առաջնայնությունը որոշելու մեթոդներով: Այդ պատճառով տարբեր որոնման ծրագրերի օգտագործումը տարբեր արդյունքներ է տալիս:

## **Ստացված տեղեկության քննադատական գնահատականը**

Ի տարբերություն գրադարանային ավանդական ռեսուրսների տեղեկության որոնման բազմաթիվ աղբյուրներին պետք է վերաբերվել քննադատաբար: Տեղեկության որոնում իրականացնելու կարողությունը ենթադրում է նաև ստացված տեղեկությանը քննադատաբար վերաբերվելու կարողություն: Նախքան օգտվողին այս կամ այն հասցեն առաջարկելը անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

- ինտերնետում յուրաքանչյուրը կարող է կայք բացել և այնտեղ տեղադրել ցանկացած տեղեկություն.
- բազմաթիվ կայքերում տեղադրված նյութերը հազվադեպ են խմբագրվում և ստուգվում մասնագետների կողմից.
- բացակայում են կայքի տեղեկության արժանահավատության չափանիշները.
- հաճախ դժվար է լինում հասկանալ, թե ո՞վ է տվյալ տեղեկության հեղինակը.
- ոչ միշտ են նշվում նյութերի տեղադրման ամսաթվերը: Անհրաժեշտ է որոշել, թե որքանով արդիական պետք է լինի պահանջվող տեղեկությունը: Գիտության մի շարք ոլորտներում արդիականությունը կարևոր դեր է խաղում. անհրաժեշտ են լինում ամենաթարմ աղբյուրները.
- արդյո՞ք տեղեկության բարդությունը համապատասխանում է օգտվողի տարիքին և պատրաստվածության մակարդակին: Կարող է նա արդյո՞ք տեքստից գլուխ հանել, թե արժե՞ փնտրել ինչ-որ ավելի հեշտ բան.
- տվյալները ոչ միշտ են հուսալի և ժամանակակից:

Տվյալ կայքի տեղեկության որակի մասին կարելի է դատել, եթե ուշադրություն դարձվի հետևյալ կարևոր հանգամանքներին.

- նշվա՞ծ է արդյոք տվյալ նյութի հեղինակը, կարելի՞ է արդյոք ճշտել նրա կենսագրական տվյալները, կա՞ն արդյոք կայքի վրա նրա կոնտակտային տվյալները: Գրքերում, հաճախ նաև ամսագրերում հեղինակի մասին տեղեկություն-

ներ են հաղորդվում, իսկ ինտերնետում կայքերը հաճախ մնում են անանուն,

- ո՞ւմ է պատկանում տվյալ կայքը, ի՞նչ կազմակերպություն է նրան հովանավորում,
- կայքի դոմենային անվանմանը (.gov, .edu, .org),
- «կայքի մասին» հղման նշոցին,
- կայքի հասցեում (~) խորհրդանիշի առկայությանը, որը նշանակում է, թե կայքի այս բաժինը անհատական տնօրինության տակ է: Խորհուրդ ենք տալիս քննադատաբար վերաբերվել անհատական էջերի բովանդակությանը. հաճախ դրանք տեղադրված են լինում բազմազան ինտերնետային ծառայություններ առաջարկող կայքերի (AOL, Mindspring, MSN և այլն), ինչպես նաև էլեկտրոնային ընկերությունների / կապերի կայքերի վրա (GeoCities, Tripod, Angelfire, Freenet և այլն),
- կայքի բովանդակությանը հասցեի համապատասխանությանը:

Առաջարկում ենք արդյունավետ որոնմանը նպաստող մի քանի խորհուրդներ: Հետևելով դրանց՝ կարելի է կարճ ժամանակահատվածում տիրապետել արդյունավետ որոնման հմտություններին, որը թույլ կտա, օգտագործելով որոնման համակարգերի հնարավորությունները, մեծաքանակ օն-line աղբյուրներում գտնել պահանջվող տեղեկությունը և ժամանակ խնայել:

## Ինչպե՞ս ձևակերպել հարցումը

1. **Web-տարածության** վրա տեղեկություն կարելի է փնտրել զանազան աղբյուրներում և տարբեր ձևերով. այն կարող է լինել որոշակի փաստաթուղթ, թեմատիկ աղբյուր (որտեղ կարող են գտնվել նման փաստաթղթեր), էլեկտրոնային գրադարան, հանրագիտարան, վիքիփեդիա, հղումների հավաքածու, ֆորում և այլն: Տեղեկության ամեն տեսակի համար անհրաժեշտ է ընտրել որոնման համապատասխան աղբյուր:

Եթե ձեզ անհրաժեշտ է ծանոթանալ այս կամ այն թեմային, տրամաբանական է որոնումն սկսել գրացուցակից:

Գոյություն ունեն բազմաթիվ գրացուցակներ: Օրինակ՝ ռուսական համացանցում համեմատաբար ավելի հանրաճանաչներից մեկը գտնվում է [http:// list.mail.ru/](http://list.mail.ru/) հասցեում: Համացանցում ընդհանուր պրոֆիլի գրացուցակների կողքին շատ են մասնագիտացված գրացուցակները: Օրինակ՝ մանկական աղբյուրներին նվիրված լավ գրացուցակ կարելի է գտնել [www.kinder.ru](http://www.kinder.ru) հասցեում կամ Ռուսական պետական մանկական գրադարանի կայքի վրա՝ <http://www.rgdb.ru/links.aspx>:

Եթե անհրաժեշտ է որոշակի տեղեկություն, ինչ-որ փաստ կամ ամսաթիվ՝ լավագույն ընտրությունը կլինի բառարանը, հանրագիտարանը, վիքիփեդիան: Իսկ եթե այն ընդհանուր տեղեկություն է, օրինակ՝ ուսումնասիրության ոլորտ, կպահանջվի ավելի խորը վերլուծություն: Կարևոր է նաև հաշվի առնել, թե ով պետք է օգտագործի տեղեկությունը (դպրոցականը, ուսանողը, գիտնականը, հետազոտողը): Այդ պատճառով սկզբում անհրաժեշտ է ձևակերպել ձեր որոնման հարցումը, թե ի՞նչ տեղեկություն եք փնտրում:

2. **Փաստաթղթերի թիվը**, որ ստացվել է որոնման արդյունքում, կարող է հսկայական լինել: Այդ պատճառով տեղեկության արդյունավետ որոնման համար վճռական նշանակություն ունի հարցման տողում բառերի ճիշտ հավաքագրումը: Անհրաժեշտ է պարզել

հարցման թեմայի էությունը, ընտրել որոնման առարկան բնութագրող հիմնական հասկացությունները: Որոնելու համար հարցման բառեր ընտրելիս առանձնացնել հատուկ բառեր, որոնք ձեր կարծիքով կարող են լինել պահանջվող կայքերում և հոդվածներում, ինչպես նաև որոշել`

- այդ բառերը հոմանիշներ ունե՞ն
- կա՞րողյոք այլ ուղղագրություն այդ բառերի համար
- կարևո՞ր է արդյոք մեծատառերի / փոքրատառերի գործածությունը կամ եզակի / հոգնակի թիվն այդ բառերում:

3. **Օգտակար է սկզբում ընտրել որոնվող առարկան բնութագրող հիմնական հասկացությունները, այնուհետև բանալի բառերը և նրանց հարմար հոմանիշներ գտնել:** Մի քանի բանալի բառերի առկայությունն ավելի ճիշտ է մատնանշում որոնվող առարկան: Օգտագործե՛ք որոշակի բառատեսակներ և հասկացություններ`

- տեղանուններ
- անձնանուններ
- վերնագրեր
- ուրիշ անուններ, անվանումներ

Օրինակ` պետք է տվյալներ գտնել այն մասին, թե ինչպես է ջրի աղտոտվածությունն ազդում մարդու առողջության վրա:

*Բանալի բառերը` ջուր, աղտոտվածություն, առողջություն:*

*Հոմանիշները` գետերը, լճերը, ծովերը, ափամերձ թափոնները և այլն: Կարելի է փնտրել նաև նավթի արտանետվածքը, քիմիական, կենսաբանական և այլ արտանետումներ:*


*Այլ ուղղագրություն` չկա*

*Մեծատառեր` կարելի է նշել ինչ-որ լճի, գետի կամ մարզի անվանում:*

4. Հարցում արտահայտող բառերի ընտրությունից հետո կշռադատե՛ք նրանց տրամաբանական կապերը: Բուլյան տրամաբանությունը թույլ է տալիս հարցման տողում բառերի միջև կապը ցույց տալ երեք` եվ, ԿԱՄ, ՈՉ տրամաբանական օպերատորների միջոցով:


**Բուլյան գործանշանների (օպերատորների)  
օգտագործման օրինակներ**

**ԵՎ**




**ԵՎ գործանշանի օգտագործումը՝ մեզ հետաքրքրում է կապը  
կրթության և գրագիտության միջև**

**ԿԱՄ**



**ԿԱՄ օպերատորի օգտագործումը՝ անհրաժեշտ են տվյալներ  
կրթության կամ գրագիտության մասին**



Ոչ օպերատորի օգտագործումը՝ անհրաժեշտ են տվյալներ կրթության մասին, բայց չենք ուզում տեսնել միջնակարգ կրթությանը վերաբերող նյութերը

**5. Ինտերնետում ավելի արդյունավետ որոնման համար նախընտրելի է ոչ թե բայերի, այլ գոյականների, որոշիչների, բառակապակցությունների կիրառումը, հատուկ (նեղ) եզրերի օգտագործումը:** Ընթերցողի հետ 1-2 բանալի բառերից կամ արտահայտություններից կազմված փորձնական հարցումներ հավաքել, այնուհետև վերլուծել քանակական արձագանքը:

**6. Եթե որոնման արդյունքում չի գտնվել ոչ մի փաստաթուղթ, հնարավոր է՝ հարցման բառը գրելիս դուք ուղղագրական սխալ եք թույլ տվել:** Ստուգե՛ք ուղղագրությունը և կրկնե՛ք որոնումը:

**7. Մի՛ գրեք մեծատառերով:** Եթե հարցման մեջ բառը նշված է մեծատառով, ուրեմն կգտնվեն բառեր միայն այդպիսի գրությամբ, իսկ եթե փոքրատառով՝ երկու տարբերակներով: Օրինակ՝ «Կոզլով» ձևով հարցումը թույլ կտա սահմանափակվել ազգանունին հղումներով՝ մեկուսացնելով համապատասխան կենդանիների մասին հիշեցումները (բացառությամբ դրանց մեծատառերով գործածությունը, օրինակ՝ նախադասության սկզբում): Հարցման մեջ մե-



ծատառերը խորհուրդ է տրվում օգտագործել միայն հատուկ անուններում:

**8. Եթե գտնված փաստաթղթերից մեկն ավելի մոտ է պահանջվող թեմային, քան մյուսները, գտե՛ք և կիրառե՛ք «Գտի՛ր նման փաստաթղթեր» հղումը (նման ծառայություն գործում է որոնման համակարգերի մեծ մասում):**

**9. Եթե որոնման արդյունքները չափազանց շատ են կամ դրանք թեմային չեն համապատասխանում՝**

- որոնումն իրականացրե՛ք միայն համապատասխան բաժնում.
- հարցման տողում ավելացրե՛ք հարցի էությունը պարզաբանող բառեր
- օգտվե՛ք ձեր՝ (որոշակի) թեմայի վերաբերյալ բառարանից, խուսափե՛ք բազմիմաստ բառերից
- օգտագործելով ԿԱՄ օպերատորը՝ վերականգնե՛ք տրամաբանական կապը մի քանի բառերի միջև
- եթե բառերից մի քանիսն արտահայտություն են կազմում, դրանք չակերտների մեջ վերցրե՛ք
- կիրառե՛ք ՈՉ օպերատորը որոնման արդյունքների շրջանակը նեղացնելու նպատակով

**10. Եթե որոնման արդյունքները քիչ են.**

- որոնման տողից հանե՛ք այն բառերը, որ համեմատաբար շատ կարևոր չեն
- օգտագործե՛ք ավելի ընդհանուր բառարան

### **Ի մի բերենք արդյունքները**

Այսպիսով՝ հարցումը ձևակերպելիս կարևոր է հիշել հետևյալը.

- օգտագործե՛ք 6-8 բառ՝ նախապատվությունը տալով գոյականներին.
- խուսափե՛ք բայերից, կիրառե՛ք որոշիչներ. օրինակ՝ «մանկական գրադարան»՝ «գրադարան»-ի փոխարեն.

- օգտագործե՛ք բառակապակցություններ (բառակապակցությունները որոնման տողում առանձնացրե՛ք չակերտներով), օրինակ՝ «արեգակնային համակարգ».
- ավելացրե՛ք նոր բառեր՝ կիրառելով ԿԱՄ օպերատորը.
- ուշադրություն դարձրե՛ք ուղղագրությանը. փորձե՛ք բառն այլ կերպ գրել.
- հնարավորության սահմաններում օգտագործե՛ք հատուկ (ներ) տերմիններ.
- քիչ թերթե՛ք՝ անկախ որոնման արդյունքների մասշտաբներից.
- օգտվելով որոնման համակարգից՝ ընթերցե՛ք օգնություն բաժինը. տարբեր համակարգերում կիրառման կանոնները կարող են տարբերվել.
- եթե հարցը ձևակերպելիս դուք կիրառում եք բուլյան գործանշանները, համոզվե՛ք նրանց ճիշտ գրության մեջ.
- հարցման տողում հոմանիշներ նշելով՝ գործածե՛ք ԿԱՄ բուլյան գործանշանը.
- ուշադիր ստուգե՛ք հարցման տողում բառերի ճիշտ գրությունը.
- եթե որոնման համակարգը տարբերակում է մեծատառերը, օգտվե՛ք այդ հնարավորությունից՝ որոնման ավելի ճշգրիտ արդյունքներ ստանալու նպատակով.
- օգտագործե՛ք տարբեր որոնման համակարգեր, առանձին համակարգերի տվյալների պաշարները տարբերվում են:

## **Մի քանի խորհուրդներ ևս, որոնց հետևելով՝ դուք կարող եք ժամանակ խնայել**

### ***Մի՛ կորցրեք ինքնատիրապետումը***

WWW-ի ինտերակտիվ միջավայրը գրավում է բոլորին, հատկապես երեխաներին, և հաճախ վեբ-սերֆինգի (որոնման) ընթացքում մենք մոռանում ենք, թե ինչպե՞ս ենք ընկել տվյալ կայք, ի՞նչ էինք ուզում գտնել և ո՞ր հասցեում է տեղադրված հենց նոր տեսած արտառոց տեղեկությունը: Այդ դեպքում մի՛ արհամարհեք ձեր բրաուզերի ետ և Առաջ ֆունկցիաների կանոնավոր օգտագործման հնարավորությունը, որն օգնում է կարգավորել տեղեկությունը:

Տեղեկությունը և ժամանակը չկորցնելու համար սովորեցրե՛ք օգտվողներին միշտ պարզ որոշել առաջիկա on-line սեանսի նպատակը. աշխատանքի ընթացքում չընկրկել նրանից՝ առաջացող այլևայլ մտքերն ու ցանկությունները թողնելով ապագային: Որոնման աշխատանքի փուլ առ փուլ պլանավորումը նույնպես արդյունավետ կարող է լինել. որոնումը կդառնա ավելի գիտակցված և կանոնավոր, իսկ արդյունքը՝ ավելի լիարժեք և ստույգ:

### ***Անջատե՛ք պատկերների արտացոլումը***

Եթե դուք չեք ցանկանում տեսնել բազմաթիվ գովազդային գրադրվագները, և ձեզ համար ոչ թե կայքերի ձևավորումն է կարևոր, այլ դրանց բովանդակությունը, փոխե՛ք բրաուզերում նշված դիտելու ռեժիմը միայն տեքստի երևակման ռեժիմով: Դա կսահմանափակի մուլտիմեդիայի հնարավորությունները և նշանակալիորեն կարագացնի որոնման արագությունը: Եթե այդ ընթացքում որևէ կարևոր գծանկարչական տեղեկություն շտապ դիտելու անհրաժեշտություն կառաջանա, օգտվե՛ք համատեքստային մենյուի «Ցույց տալ նկարը» կետից՝ պատկերման համար սեղմելով մկնիկի աջ կոճակը չպատկերված նկարի տեղում:

### ***Ֆիքսե՛ք «Կարևոր էջերին» հղումը***

Պահպանե՛ք հղումները կարևոր և ձեր կողմից հաճախ օգտագործվող էջերի վրա՝ կիրառելով բրաուզերի «Ավելացնել Ընտր-

վածների մեջ» հրամանը: Այս հրամանն օգտագործում են նաև ապագա մանրակրկիտ ուսումնասիրության նպատակով՝ սրընթաց ընտրության պրոցեսում որոնման մոտավոր արդյունքները գրանցելու համար: Պահե՛ք ձեր ընտրած հղումների հավաքածուն աշխատանքային իրավիճակում. թարմացրե՛ք և կանոնավորե՛ք այն, հեռացրե՛ք հնացած և անպետք հղումները:

### ***Պահպանե՛ք կարևոր փաստաթղթերի պատճենները***

Ինտերնետ ցանցում տեղեկությունը կարող է ոչ մշտական և փոփոխական լինել: Իրենց հասցեներից ժամանակավոր անհետանում են էջեր և ամբողջ կայքեր: Համացանցից ձեզ անհրաժեշտ տեղեկության պատճենները ձեր համակարգչում ստեղծելու համար կիրառե՛ք համատեքստային մենյուի հրամանները (մկնիկի աջ կոճակով բերված)՝ **Պահպանե՛լ օբյեկտն ինչպես...** և **Պահպանե՛լ նկարն ինչպես...**, ինչպես նաև բրաուզերի ցուցակից «Ֆայլի» **Պահպանե՛լ ինչպես...** հրամանը: Դրանով դուք կլուծեք online միացման ժամանակի խնայողության հիմնախնդիրը և ընտրված նյութերի ուսումնասիրությունը կկատարեք off-line ռեժիմում:

### ***Խորհուրդ «Սխալ 404»-ի ի հայտ գալու դեպքում***

Երբեմն կարող է պատահել, որ որոնման ծրագիրը հղումն ուղարկում է ձեզ հետաքրքրող փաստաթղթի վրա, իսկ այդ հղումով անցումը ձեզ կանգնեցնում է «Սխալ 404: Սերվերում ձեր ցույց տված հասցեով փաստաթուղթը բացակայում է» հաղորդագրության առջև: Այդպիսի իրավիճակում երբեմն, այնուամենայնիվ, հաջողվում է այդ սերվերում գտնել անհրաժեշտ էջը «աջից էջի հասցեի կրճատում» ուղիով: Օրինակ՝ եթե մենք Սերգեյ Լուկյանենկոյի (այս հեղինակի գրքերն ընկած են «Ցերեկային պահակախումբ», «Գիշերային պահակախումբ» ֆիլմերի հիմքում) նոր գիրքը փնտրելիս հղումից անցել ենք <http://www.rusf.ru /lukian/books/index.htm> հասցեին և ընկել ենք «Սխալ 404» էջը, կարելի է էջի հասցեն հետևողականորեն բաժանել մասերի՝ սկսելով աջից: Հնարավոր է մեզ հաջողվի ընկնել այնտեղ, որտեղից մենք կգտնենք մեզ հետաքրքրող գիրքը կամ էլ կգանք սերվերի գլխավոր էջը և այլևս հնարավորություններ չենք ունենա հասցեն կրճատելու: Այլ կերպ ասած, մենք սկզբում կփորձենք նայել <http://www.rusf.ru/lukian/books//>

էջը. հնարավոր է նրա վրա հղումներ լինեն հեղինակի բոլոր գրքերին: Եթե մենք նորից ստանանք «Սխալ 404», մենք կփորձենք <http://www.rusf.ru/lukian.-ը>. հնարավոր է՝ մենք այստեղ Լուկյանենկոյի գրքերին հղում գտնենք: Եթե այստեղ ևս մեզ անհաջողություն է սպասում, մենք կգնանք գլխավոր էջ՝ կայքի հասցեն կրճատելով մինչև <http://www.rusf.ru>: Հնարավոր է, որ այնտեղ մենք հղում գտնենք դեպի նոր հասցե, որտեղ այժմ պահվում է հեղինակի գրքերի հավաքածուն:

«Հասցեի կրճատում աջից» մեթոդը ոչ միշտ է արդյունավետ պահանջվող էջը գտնելու համար (կարող է պատահել, որ այն այլևս այդ սերվերում գոյություն չունի, և նույնիսկ հղման նշոցներ չեն մնացել), սակայն հաճախ այդ մեթոդը բավականին օգտակար է լինում:

### ***Ընթերցողների հետ վերլուծե՛ք կայքերի հասցեները***

Կարևոր է օգտվողներին սովորեցնել փաստերը կարծիքներից տարբերել: Հարցրե՛ք երեխաներին ինտերնետում նրանց գտած տեղեկության մասին: Ինչի՞ համար է նրանց պետք այդ կայքը. զվարճանալո՞ւ, ապրանքը վաճառելո՞ւ: Կայքի վրա կա արդյո՞ք, կոնտակտային տեղեկություն կամ «Մեր մասին» բաժինը: Արդյո՞ք կայքի վերնագիրը լիովին է բացահայտում նրա բովանդակությունը: Կայքը հովանավորվո՞ւմ է ինչ-որ մեկի կողմից, թե՞ այն ֆորում է՝ հանրային բանավեճի անկյուն:

Մտածե՛ք, արդյո՞ք ինտերնետն այդ տեղեկությունը որոնելու լավագույն միջոցն է:

Առաջարկե՛ք ստուգել համացանցում հավաքված տեղեկություններն այլ աղբյուրներով: Նյութերը ստուգելու համար դիմե՛ք այլ կայքերի կամ ՋԼՄ-ների, թերթերի, ամսագրերի և գրքերի: Խրախուսե՛ք տարբեր աղբյուրների օգտագործումը: Առաջարկեցե՛ք հանրագիտարաններ և սեղմապնակների, DVD-ների վրա գրանցված ուսուցանող ծրագրեր, որոնք օգտվողներին կօժանդակեն մուտք գործել տեղեկության այլընտրանքային աղբյուրներ:

## Անվտանգությունն ինտերնետում

Ինտերնետը համընդհանուր տեղեկատվական ցանց է, որի մասերն իրար հետ տրամաբանորեն փոխկապակցված են հասցեների ընդհանուր տարածության միջոցով: Ինտերնետը բաղկացած է բազմաթիվ փոխկապակցված համակարգչային ցանցերից և հեռակա կարգով մուտք է ապահովում դեպի համակարգիչներ, էլեկտրոնային փոստ, հայտարարությունների աղբյուրներ, տվյալների բազաներ և բանավիճային խմբեր:

Համացանցն իրական աշխարհի նման կարող է վտանգավոր լինել. այնտեղ ևս կատարվում են հանցագործություններ՝ խուլիգանություն, վնասարարություն և այլ տհաճ երևույթներ: Ինչպես իրական, այնպես էլ վիրտուալ աշխարհում կարող են տեղի ունենալ փողի, անհատական տվյալների գողություններ, այլ տեսակի խաբեբայություններ: Հաղորդակցման վիրտուալ բնույթը վատ մտադրություններ ունեցող մարդկանց վնաս հասցնելու լրացուցիչ հնարավորություններ է տալիս: Ինտերնետում ագրեսիվ և սոցիալական վնասակար բովանդակությամբ բազմաթիվ նյութեր են հայտնվում: Անհրաժեշտ է հիշել նման սպառնալիքների գոյության մասին և դրանց խիստ ուշադրություն դարձնել:

Համակարգչային վտանգները բաժանվում են երկու տեսակի.

- վեբ էջերի անցանկալի բովանդակություն (ինտերնետում բացակայում է գրաքննությունը: Այդ պատճառով՝ բովանդակությունը կարող է լինել անկանոն, ոչ ճիշտ, իսկ հաճախ կուլտուրական և բարոյա-էթիկական տեսանկյունից ուղղակի անընդունելի):
- տեխնիկական հիմնախնդիրներ (զանազան վիրուսներ, սպամ, ինտերնետային խարդախություններ):

Գոյություն ունեն մի քանի հնարավոր ռիսկեր (վտանգներ), որոնց կարող են հանդիպել մեր ընթերցողները՝ հատկապես դպրոցականները, ինտերնետից առանց հսկողության օգտվելու դեպքում.

- երեխաները կարող են իրենց տարիքին անհամապատասխան տեղեկություններ ներթափանցելու թույլտվություն ստանալ: Այդ տեղեկություններից են պոռնոգրաֆիան, մուլտրեցունը (դեզինֆորմացիան), կեղծիքը, ատելության, անհանդուրժողականության, բռնության, դաժանության քարոզչությունը.
- երեխաները կարող են ներթափանցել գործողություններ կատարելու հնարավորություն տվող տեղեկություն և իրենց համար պոտենցիալ վտանգավոր ապրանքներ գնել: Գոյություն ունեն կայքեր, որոնք առաջարկում են պայթուցիկ նյութեր պատրաստելու հրահանգներ, վաճառում են զենք, ալկոհոլ, վնասակար և թունավոր նյութեր, թմրադեղեր, ծխախոտ, ինչպես նաև մուլի օնլայն խաղերում մասնակցելու առաջարկներ անող կայքեր.
- երեխաները կարող են հալածանքների ենթարկվել ցանցի այլ օգտվողների կողմից. հաճախ չարամտություն կատարում են ուրիշ երեխաները, որոնք կոպիտ են պահում իրենց ինտերնետում վիրավորանքներ են գրում և սպառնում.
- երեխաները հարցաթերթիկներ լրացնելով և օնլայն մրցույթներին մասնակցելով՝ կարող են տրամադրել կարևոր անձնական տեղեկություն և արդյունքում՝ անագնիվ, շուկայաբանական արգելված մեթոդներ կիրառող անպատասխանատու առևտրականների զոհ դառնալ.
- երեխաները կարող են ինտերնետի միջոցով ապրանքներ գնելիս խաբեության զոհ դառնալ, ինչպես նաև ֆինանսական կարևոր տեղեկություն հայտնել այլ օգտվողների (օրինակ՝ կրեդիտ քարտի, փին կոդի և գաղտնաբառի համարը).
- երեխաները կարող են մանուկների հետ անհատական հանդիպումներ փնտրող կիբեռնուլագարների զոհը դառնալ:

Բոլոր վերոթվարկյալներից հետևում է, որ անհրաժեշտ է գրադարանում և դպրոցում ինտերնետից օգտվելու կանոններ սահմանել:

Համացանց մտնելու հնարավորությունը նախատեսե՛ք միայն մեծերի տեսադաշտում գտնվող համակարգիչներից:

Ջրուցե՛ք երեխաների հետ, մանրակրկիտ պատմե՛ք ինտերնետում գոյություն ունեցող վտանգների մասին ավելի շուտ, քան նրանք կներթափանցեն ինտերնետ: Բացատրե՛ք ինտերնետից անվնաս օգտվելու կանոնները: Սահմանե՛ք ինտերնետից օգտվելու որոշակի սահմանափակումներ և դրանք քննարկե՛ք նրանց հետ:

Անհրաժեշտ ենք համարում պատանի ընթերցողներին ծանոթացնել ինտերնետում վարքագծի հետևյալ կանոններին.

- ինտերնետի միջոցով առանց ծնողների թույլտվության երբեք չփոխանցե՛լ անձնական տեղեկություն՝ տան հասցեն, հեռախոսի համարը, աշխատանքային հասցեն, ծնողների հեռախոսահամարը, կրեդիտային քարտերի համարները կամ դպրոցի անվանումն ու տեղը: Ջգուշորեն վերաբերվե՛լ յուրաքանչյուրին, ով ձեզնից այդ բնույթի տեղեկություն կպահանջի.
- առանց ծնողների թույլտվության երբեք չհամաձայնվե՛լ «իրական» կյանքում հանդիպել կամ հեռախոսով խոսել այն մարդու հետ, որի հետ ծանոթացել եք ինտերնետում: Հաճախ դժվար է ստուգել, թե արդյո՞ք մարդիկ ինտերնետում իրենց չեն կեղծում.
- ինտերնետի կամ սովորական փոստի միջոցով առանց ծնողների թույլտվության երբեք անծանոթ մարդկանց չուղարկե՛լ սեփական կամ ընտանիքի անդամների լուսանկարները.
- երբեք ոչ մեկին, բացի ծնողներից, չտա՛լ ինտերնետի գաղտնաբառը (նույնիսկ լավագույն ընկերներին)
- չանե՛լ ոչինչ, որը կարող է վիրավորել, զայրացնել ուրիշ մարդկանց կամ հակասել օրենքին.
- առանց ծնողների թույլտվության ինտերնետում երբեք վճար պահանջող ոչ մի քայլ չանե՛լ:

Հիշե՛ք՝ ինտերնետի ոչ բոլոր տեղեկություններն են հեղինակավոր և հուսալի: Ինտերնետի բոլոր տեղեկություններին մի՛ վստահեք. դա հատկապես վերաբերում է բժշկական կամ առողջությանը վերաբերող այլ տեղեկություններին:

Ինտերնետում վարվեցողության կանոնների մասին ավելի մանրակրկիտ տեղեկություններ կարելի է գտնել



<http://www.microsoft.com/rus/athome/security/online/netiquette.msp>  
կայքի վրա: Microsoft ընկերությունը հայտարարել է ինտերնետը  
երեխաների կողմից օգտագործելու նոր հսկողության մեթոդների  
մասին: Մշակվել են ծրագրային նոր եղանակներ, որոնց օգնությամբ  
ծնողները կարող են արգելափակել մուտքը դեպի այս կամ  
այն ինտերնետ-պաշարներ այն ժամանակ, երբ երեխան օգտվում է  
ինտերնետից: Ընկերության հայտարարության համաձայն ծրագրային  
միջոցները թույլ կտան ծնողներին իրենց երեխաներին  
արդյունավետ պաշտպանել անցանկալի ինտերնետ-ռեսուրսներից:

## Ի՞նչ է վիրուսը

Վիրուսները ծրագրեր են, որոնք խոչընդոտում են համակարգչի կանոնավոր աշխատանքը, վերագրանցում են, վնասում կամ ոչնչացնում տվյալները: Վիրուսով վարակված համակարգիչը կարող է սկսել դանդաղ աշխատել, ընդհատել աշխատանքը և վերաբեռնավորվել մի քանի րոպեն մեկ, ի հայտ բերել այլ թերություններ:

Վիրուսները կարող են տարածվել ինտերնետից բեռնավորված ծրագրերի կամ վարակված համակարգչային սկավառակների (դիսկերի) միջոցով, որ դուք կարող եք վերցնել ընկերներից: Բայց հիմնականում վնասաբեր ծրագրերը օգտվողների համակարգիչներում հայտնվում են, երբ վերջիններս բացում են իրենց անհայտ նամակագիրներից ստացած էլեկտրոնային նամակներին կցված ֆայլերը: Բացելով՝ ակտիվացնելով, վարակված ֆայլը՝ դուք կարող եք չիմանալ, որ վնասաբեր ծրագիր եք ստացել, քանի որ վիրուսներն իրենց ավերիչ աշխատանքը միանգամից չեն սկսում: Վիրուսը չի կարող տարածվել առանց մարդու մասնակցության. այն տեղ հասցնելու համար ինչ-որ մեկը պետք է ֆայլը տարածի կամ էլեկտրոնային նամակ ուղարկի:

Հաճախ վիրուսները կցված են լինում ուրիշ ֆայլի, որ դուք քաշել կամ տեղադրել եք: Անհրաժեշտ է հետևել նախազգուշական միջոցառումներին, մասնավորապես՝ համակարգչի մեջ տեղադրել հակավիրուսային ծրագրեր և պարբերաբար դրանք թարմացնել:

Եթե դուք նամակ եք ստացել անծանոթ հասցեատիրոջից, որին ֆայլ է կցված, այդպիսի ֆայլը խորհուրդ չենք տալիս բացել: Ինտերնետից ֆայլեր քաշելու ընթացքում նույնպես համակարգիչը վարակելու վտանգ կա: Անհրաժեշտ է ֆայլերը քաշել հուսալի աղբյուրներից և պարտադիր է ընթերցել վտանգի վերաբերյալ նախազգուշացումները, ներմուծման և արտածման թույլտվության համաձայնագրերը և գաղտնիության մասին դրույթները:

Եթե դուք ծրագրեր եք քաշում ինչ-որ կայքերից, ապա դրանք տեղադրելուց առաջ պետք է ստուգել վիրուսների առկայությունը նրանցում՝ օգտագործելով հակավիրուսային ծրագրեր, որոնցից

ամենապարզն են՝ Kaspersky Internet Security հակավիրուսային ծրագիրը, Doctor WEB հակավիրուսը, Norton AntiVirus-ը:

Գոյություն ունի վիրուսների հատուկ տեսակ՝ դրանք ստացողի բոլոր ծանոթներին ուղարկվելու առաջարկով նամակներ են: Այդպիսի նամակը կարող է համարյա ոչինչ չանելով՝ անհաշիվ հարստություններ աշխատելու առաջարկություն անել, նրա մեջ կարող է լինել նախազգուշացում հնարավոր ինչ-որ լուրջ հիմնահարցի մասին և այլն: Որպես օրենք, այդպիսի նամակներում իբրև տեղեկության աղբյուր նշվում է որևէ հեղինակավոր ընկերության անվանում՝ IBM, Microsoft, ICQ և այլն: Մի՛ զբաղվեք նմանօրինակ նամակներ տարածելով:

Ավելի մանրամասն տեղեկություններ, թե ինչպես բարելավել ձեր համակարգչի պաշտպանությունը, տեսե՛ք Microsoft-ի <http://www.microsoft.com/Rus/Security/Protect/Default.mspx> հասցեով վեբ կայքում:

Սակայն ոչինչ չի կարող ձեր համակարգչի պաշտպանության հարյուր տոկոսանոց երաշխիք հանդիսանալ: Այդ պատճառով չափազանց ուշադիր եղեք անծանոթ հասցեատիրոջից ներդիրով հաղորդագրություն ստանալիս: Հիշե՛ք, որ վիրուսը ներթափանցում է այն պահին, երբ դուք բացում եք ներդրված վարակված ֆայլը:

Այսպես կոչված օնլայն տեսահեռությունը ևս մեկ պատճառ է, որի միջոցով ձեր համակարգիչը կարող է խոցելի դառնալ վիրուսների կամ այլ վնասակար ծրագրերի համար: Այսպես է կոչվում հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի՝ երաժշտության, ֆիլմերի, խաղերի կամ ծրագրերի քաշումը՝ առանց օրինական տիրոջ թույլտվության: Տեսահեռությունն ըստ էության սովորական գողություն է: Գիտեցե՛ք, որ ինտերնետում բազմաթիվ տեղեր կան, որտեղից անվճար կամ ցածր գնով կարելի է ծրագրեր, ֆիլմեր, խաղեր և երաժշտություն քաշել: Օրինակ՝ MSN Music <http://www.music.msn.com/> կայքն առաջարկում է տարբեր ստուդիաների միլիոնից ավելի ձայնագրություններ:

## Վերջարան

Այսօր գիտելիքները և տեղեկույթը հասարակության զարգացման կարևորագույն գործոններ են: Տեղեկությունը օպերատիվ կերպով գտնելու, այն գնահատելու և իր շահերին ծառայեցնելու կարողությունը յուրաքանչյուր մարդու համար դառնում է անհրաժեշտ հմտություն: Իրենից տեղեկությունների վիրտուալ պահոց ներկայացնող ինտերնետի ներդրումը էական փոփոխություններ է մտցրել նաև գրադարանի աշխատանքում: Գրադարանավարի կարևոր դերը՝ միջնորդ հանդիսանալ տեղեկատվական միջոցի և օգտվողի միջև, նրա առջև նոր խնդիր է դրել՝ ինֆորմացիոն ընդարձակ տարածության մեջ դառնալ նորարար, ով ընդունակ է թեթևացնել և արագացնել տեղաշարժումը վիրտուալ ցանցում, օգնել ընթերցողներին գնահատել ստացված տեղեկությունը: Իսկ մանկական գրադարանավարի դերը կարևոր է նաև իր ընթերցողների տեղեկատվական կուլտուրայի ձևավորման, անընդհատ բարդացող և ընդլայնվող տեղեկությունների և գիտելիքների արդյունավետ յուրացմանը նրանց պատրաստելու գործում:

Այս ձեռնարկն ստեղծելով՝ մեր առջև նպատակ չենք դրել առաջարկել խիստ մեթոդիկա տեղեկատվական որոնում կատարելու իմացությունների և ինտերնետում անվտանգության միջոցների ապահովման մասին, այլ սոսկ ձևակերպել ենք հիմնական սկզբունքները, որոնց վրա, մեր կարծիքով, պետք է հիմնվի ժամանակակից գրադարանավարի աշխատանքը: Թող ձեզնից յուրաքանչյուրը, հիմնվելով այս խորհուրդների վրա, այն յուրովի արտացոլի որոշակի աշխատանքում:

Երախտագիտությամբ կընդունենք ձեր դիտողությունները և առաջարկները:

## **Եզրերի բառարան**

### **Բաններ**

Բանները վեբ էջերի վրա գովազդման նպատակով տեղադրված անշարժ պատկերը կամ պարզ մուլտիպլիկացիան է (կենդանացված պատկերը):

### **Բրաուզեր**

Բրաուզերը մեկնաբանող է (անգլերեն browse-մեկնաբանություն բառից): Տվյալ դեպքում նկատի է առնվում ինտերնետի մեկնաբանողը, օրինակ՝ Internet Explorer (սովորաբար կրճատվում է այսպես՝ IE): Պարզ ասած՝ բրաուզերը համակարգչում տեղադրված ծրագիր է, որի օգնությամբ դուրս եք գալիս ինտերնետ, նայում եք կայքերի էջերը: Բացի Internet Explorer-ից գոյություն ունեն դեպի ինտերնետ ելք ապահովող նաև այլ ծրագրեր՝ Opera, Mozilla, FireFox և այլն:

### **Գրացուցակ (անգլ. web-directory)**

Գրացուցակը դասակարգված և սյունակավորված, դեպի ինտերնետ ռեսուրսներ նկարագրություններով հղումների հավաքածու է: Գրացուցակ կազմելը ռեսուրսների դասակարգման և համառոտ բնութագրման աշխատանքն է: Այդ պատճառով սովորաբար գրացուցակի պահեստում կայքերն ավելի քիչ են, քան որոնման համակարգի պահեստում, այսինքն՝ այն վերջինիս գիջում է իր ընդգրկումով:

Գրացուցակներից հարմար է օգտվել, եթե դուք ոչ թե որոշակի հարցի պատասխանն եք փնտրում, այլ կայքեր ինչ-որ թեմայի վերաբերյալ: Գրացուցակն օգտագործելու համար պարտադիր չէ որոնման հարցում ձևակերպել: Գրացուցակում կարելի է տեղաշարժվել մկնիկի օգնությամբ ուղղակի շարժվելով կատեգորիաների ծառի ուղղությամբ: Յուրաքանչյուր կարգի ներսում կայքերը կարող են տեսակավորվել տարբեր եղանակներով՝ այբբենական կարգով, ստեղծման ժամանակացույցով, այցելությունների թվով և համբավով (հղումների քանակով):

Անփորձ օգտվողները հաճախ գրացուցակները չեն տարբերում որոնման համակարգից, քանի որ գրացուցակներում նույնպես կարելի է փնտրել հարցման միջոցով, սակայն այդ դեպքում որոնումն իրականացվում է ոչ թե ամբողջ ինտերնետում, այլ գրացուցակի նկարագրությամբ:

### **Գրանցում**

Ինտերնետ կայքերի մեծամասնությունն անվճար է և մատչելի յուրաքանչյուր օգտվողի համար: Սակայն որոշ կայքեր իրենց օգտվողներին առաջարկում են լրացուցիչ սպասարկվելու կամ վճարովի ծառայություններին բաժանորդագրվելու համար գրանցման ընթացակարգ անցնել, այսինքն՝ իրենց մասին որոշ տվյալներ հաղորդել (հարցաթերթ լրացնել) ու ստանալ լոգինը և գաղտնաբառը: Լոգին անվանում են կայքից օգտվողի եզակի անունը (իդենտիֆիկատոր): Նույն կայքի վրա միևնույն լոգինով օգտվողներ չեն կարող լինել: Գաղտնաբառը գաղտնի կոդավորված բառ է կամ խորհրդանիշերի հաջորդականություն, որը հաստատում է, որ հենց դուք եք հանդիսանում այդ լոգինի տերը: Ապահովությունից ելնելով՝ գաղտնաբառը մուտքագրելիս այն արտացոլվում է աստղիկներով: Մի՛ հաղորդեք ձեր գաղտնաբառն ուրիշ մարդկանց: Իմանալով ձեր գաղտնաբառը՝ կարող են գործել ձեր անունից և այդ գործողություններով վնաս հասցնել ձեզ: Մասնավորապես, եթե դուք նամակ եք ստացել (իբրև թե) կայքի ղեկավարությունից՝ ձեր տեխնիկական հարցերը լուծելու նպատակով գաղտնաբառն ուղարկելու առաջարկով. վստահ եղեք, որ դուք ենթարկվել եք համակարգչային վնասատուի՝ հակերի գրոհին: Ոչ մի դեպքում մի՛ ուղարկեք ձեր գաղտնաբառը: Կայքի ղեկավարությունը չի կարող առաջարկել, որ դուք գաղտնաբառն իրեն ուղարկեք փոստով, հաղորդեք հեռախոսով և այլն:

Ներկայումս «հակեր» բառն օգտագործվում է հիմնականում չարական, ապասոցիալական և անպայման վտանգավոր մարդու նշանակությամբ: Համակարգիչներին և ցանցերին վերաբերելու դեպքում հոմանիշ է հանդիսանում «կոտրելով բացող» բառակապակցությամբ:

## **Դոմեն** (անգլ. domain - տարածք)

Դոմենը կամ կայքի դոմենային անվանումն անուն է, որը նույնացնում է որոշակի վեբ կայքը կամ ավելի պարզ՝ կայքի հասցեն: Ինտերնետում յուրաքանչյուր կայքի հասցե (օրինակ՝ [www.xxxxx.am](http://www.xxxxx.am)) կազմված է մասերից, որոնք կոչվում են որոշակի մակարդակի դոմեններ: Միջազգային համաձայնությամբ յուրաքանչյուր երկրի հատկացված է 2-3 տառից բաղկացած ինչ-որ նշան, որն անվանվում է առաջին կարգի դոմեն կամ այդ երկրի դոմեն: Օրինակ՝ եթե կայքի հասցեն ավարտվում է **am**-ով, նշանակում է՝ կայքը գտնվում է Հայաստանի դոմենում, **.ru**՝ Ռուսաստանի, **.fr**՝ Ֆրանսիայի, **.jp**՝ Ճապոնիայի:

Բացի սրանից գոյություն ունեն առաջին կարգի մի քանի դոմեններ, որ կապված են ոչ թե աշխարհագրության հետ, այլ կայքի ուղղվածության, օրինակ՝ **.com**-ը կոմերցիոն, **.org**-ը ոչ առևտրային, **.edu**-ն ուսումնական կազմակերպությունների համար:

Երկրորդ կարգի դոմենները վարձով տրվում են ձեռնարկություններին և անհատ անձանց, որպես օրենք, տարեկան վարձով: Յուրաքանչյուր տարածքային գոտում երկրորդ կարգի դոմեններ տալիս է հատուկ լիազորված կազմակերպությունը: Երկրորդ կարգի դոմենը, ինչպես նաև մյուս բոլորը պետք է կազմված լինեն թվերից և լատինական այբուբենի տառերից, օրինակ՝ [childlib.am](http://childlib.am), [mp3.ru](http://mp3.ru), [yahoo.com](http://yahoo.com), [b2b.ru](http://b2b.ru): Կայքի համար երկրորդ կարգի դոմեն ընտրելիս՝ սովորաբար աշխատում են գտնել այն բառը, որը պետք է համապատասխանի կազմակերպության, ապրանքի կամ գործունեության ուղղության անվանմանը, ինչպես նաև հեշտ կարդացվի և հիշվի, օրինակ՝ [gazeta.ru](http://gazeta.ru), [generalmotors.ru](http://generalmotors.ru), [narod.ru](http://narod.ru): Երկրորդ կարգի դոմենի տերը հնարավորություն ունի անսահման քանակությամբ երրորդ և այլ կարգի հասցեներ ստեղծել: Օրինակ՝ [adamyan.am](http://adamyan.am) դոմենի տերն իր համար կարող է ստեղծել [artur.adamyan.am](http://artur.adamyan.am) դոմենը, իսկ իր երեխայի համար՝ [nina.adamyan.am](http://nina.adamyan.am)-ը:

## **WWW, Web** ( World Wide Web՝ համաշխարհային ցանց )

«Web» թարգմանաբար նշանակում է սարդոստայն կամ ցանց: Այն օգտագործվում է ինտերնետային ցանց իմաստով:

### **Էլեկտրոնային փոստ (e-mail)**

Էլեկտրոնային փոստը մեկ կամ մի խումբ անձանց հաղորդագրությունների ընդունում / փոխանցումն է համացանցի միջոցով:

Էլեկտրոնային փոստը շատ հատկանիշներով հիշեցնում է սովորական փոստային կապը: Նամակ գրելով՝ դուք ծրարը գցում եք մուտակա փոստարկղը, և որոշ ժամանակ անց նամակը հասնում է հասցեատիրոջը: Իսկ եթե պարզվի, թե ինչ-որ պատճառով նամակը տեղ հասցնել հնարավոր չէ, այն կվերադառնա ուղարկողի մոտ: Էլեկտրոնային փոստը ինտերնետի և համակարգչի օգնությամբ նույն գործողությունն ավելի արագ է կատարում, այդ պատճառով մեր օրերում ամենօրյա գործնական և անձնական նամակագրության համար հիմնականում օգտագործվում է կապի այդ տեսակը: Թղթի և գրիչի փոխարեն դուք օգտագործե՛ք ստեղծաշարը՝ նամակի տեքստը հավաքելով փոստային ծրագրի կամ բրաուզերի պատուհանի վրա:

Էլեկտրոնային փոստով ուղարկված հաղորդագրությունը կարող է պարունակել տեքստեր, աղյուսակներ, գծանկարներ, ձայնային հաղորդագրություններ, մի խոսքով՝ այն ամենն, ինչը կարելի է գրառել ֆայլի մեջ: Փոստային բաժանմունքների դերում հանդես են գալիս փոստային ծառայությունները: Փոստային ծառայությունները պահպանում են օգտվողների փոստարկղերը, և փոստարկղը բացելու պահին օգտվողն անմիջապես տեսնում է ստացված նամակները: Էլեկտրոնային փոստի հաղորդագրություններ ստեղծելու, ուղարկելու և ստանալու համար կիրառվում են հատուկ փոստային ծրագրեր, որոնցից են Microsoft Outlook Express, The Bat ! Netscape Composer և այլն:

Կա նաև փոստի հետ աշխատելու այլ եղանակ, որը հատուկ փոստային ծրագրի կիրառում չի ենթադրում. բավական է սովորական բրաուզերը: Նամակներ ուղարկելու և ստանալու համար բավական է, որ այցելուն մտնի բրաուզերի փոստային էջ:

### **Internet - ի դեղին էջեր (Internet Yellow Page)**

Տեղեկատվական ռեսուրսների և կայքերի տեղեկատու: «Internet-ի դեղին էջեր: Ռուսական ռեսուրսներ» ամենամյա տեղեկատուի տասներորդ հրատարակության մեջ ներկայացված են ավելի քան 21000 առավել կայուն տեղեկատվական ռեսուրսներ և ֆիրմա-



ների ու ձեռնարկությունների կայքեր: Իսկ [www.yellowpages.am](http://www.yellowpages.am) հասցեում կարելի է ուսումնասիրել «Հայկական ինտերնետի դեղին էջեր» տեղեկատուն, որտեղ ներկայացված են 2214 կազմակերպություններ:

### **Կայքի կառավարիչ (администратор)**

Կայքի կառավարիչը վեբ կայք մուտք գործելու՝ կայքի բովանդակության խմբագրման համար անհրաժեշտ արտոնյալ իրավունքներից օգտվողն է: Կայքը կարող է ունենալ մի քանի կառավարիչ՝ տարբեր իրավունքներով:

### **Կայք (անգլ.site-տեղ, հոմանիշները՝ վեբ կայք, վեբ ռեսուրս)**

Կայքն ինտերնետում առանձնանում է իր հասցեով, ունի իր տերը և կազմված է մեկ ամբողջություն ընկալվող վեբ էջերից: Կայքի խիստ սահմանում գոյություն չունի, օրինակ՝ մեծ կայքերի որոշ բաժիններ կարող են լիովին ընկալվել և նույնիսկ իրենց տերերի կողմից առանձնացվել իբրև առանձին կայքեր: Այն էջը, որ երևում է կայքի հասցեին՝ դոմենային անվանմանը (տե՛ս դոմեն) դիմելիս, անվանում են մեկնարկային: «Կայքի հասցե» ասելով՝ հիմնականում նկատի ունեն նրա տիրույթային անունը, որին դիմելիս բեռնավորվում է կայքի մեկնարկային էջը:

### **Կոնտենտ (անգլ.content - բովանդակություն)**

Կոնտենտը կայքի վրա տեղադրված ցանկացած տեքստային կամ գծանկարչական տեղեկությունն է:

### **Հղում, հղման նշոց**

Հղումն ինտերնետում մկնիկի օգնությամբ տարբեր էջեր անցնելու հնարավորություն է: Ուշադրություն դարձրեք, որ գործնականում բոլոր ինտերնետային էջերում բառեր (գույնով առանձնացված) կամ պատկերներ կան, որոնց հասնելով՝ մկնիկի սլաքը թափկի տեսք է ստանում. դրանք հղումներ են այլ էջերին: Եթե դուք մկնիկով թարթեք որևէ հղման նշոցի վրա, ապա անմիջապես կպատկերվի այն նյութերի էջը, որ մատնանշում է հղումը:

Տպագրական արտադրանքի տեքստերում նույնպես երբեմն հղումներ ենք նկատում, սակայն նյութը, որ մատնանշում է հղումը,

դուք կարող եք մանրակրկիտ ուսումնասիրել այն ժամանակ, երբ գիրքը ձեր ձեռքում կլինի:

### **Հոստինգ (անգլ. web-hosting, collocation)**

Հոստինգը վեբ սերվերի տեղադրման ծառայություն է, որն ապահովում է ինտերնետին միացումը: Հոստինգային տարածքում սեփական սերվերի տեղադրումը վճարովի է:

Հոստինգ է անվանվում նաև ինտերնետային ցանցին մշտապես միացած սեփական սերվերի վրա ուրիշի վեբ կայքը տեղադրող ծառայությունը: Այդ դեպքում կայքի տեղեկությունը կարող է մատչելի լինել օրվա 24 ժամերին և շաբաթվա 7 օրը: Համեմատած սերվերների հոստինգացմանը կայքերի հոստինգացման պահանջարկն ավելի մեծ է, քանի որ կայքերի տեղադրումը հաճախ անվճար է:

### **Մոդերատոր**

Մոդերատորն այն օգտվողն է, որի պարտականությունը ֆորումի և չատի կանոնների պահպանմանը հետևելն է, որոնց համար ինքը պատասխանատու է: Մոդերատորների հիմնական խնդիրներն են թույլ չտալ անկարգություններ և վիրավորանքներ ֆորումներում. հետևել, որ հաղորդագրությունները համապատասխանեն ֆորումի թեմային: Մոդերատորը կարող է խմբագրել օգտվողի հաղորդագրությունը և դուրս գցել, եթե հարկ համարի: Պատիժը խախտումների դեպքում, որպես օրենք, լինում է երկու տեսակ՝ նախազգուշացում և անջատում (ֆորումից / չատից օգտվելու արգելք):

Գոյություն ունեն նաև գրացուցակների և որոնման ծրագրերի մոդերատորներ, որոնց խնդիրներից է հետևել, որ նրանց մեջ բացակայեն պոռնոգրաֆիկ, ագրեսիվ և սոցիալական տեսակետից վտանգավոր բովանդակությամբ կայքերը:

**Մուլտիմեդիա (multimedia, անգլ. multi - շատ, բազմաթիվ և media - կրող, միջավայր):**

Մուլտիմեդիան տեսալսողական, ոչ տեքստային բնույթի տեղեկություն է: Տեղեկություն տրամադրելու համար կայքերի մեծամասնությունն օգտագործում է միայն տեքստ և պատկերներ: Սակայն ինտերնետն ունի ձայն և տեսատեղեկույթ ներկայացնելու հնարա-

վորություն ևս: Դրանք դիտելու և լսելու համար կարող են պահանջվել հատուկ ծրագրեր: Դրանցից մի քանիսը մտնում են MS Windows-ի միօրինակ մատակարարման մեջ, մյուսները պետք է լրացուցիչ տեղադրել: Քանի որ համացանցում տեղեկատվության արագությունը սահմանափակ է, ձայնը և տեսանյութը ցանցով փոխանցվում են հատուկ խտացված եղանակով: Որպես օրենք խտացումը կարող է պատկերման և ձայնի որակի որոշ կորուստների պատճառ դառնալ: Չնայած խտացմանը՝ մուլտիմեդիա ֆայլերի (Նշոցների) ծավալը մեծ է: Այդ պատճառով, որպեսզի երգ լսեք կամ առավել ևս տեսահոլովակ դիտեք, ձեզ անհրաժեշտ է բավական նշանակալի ծավալի տեղեկություն քաշել:

**MP3, MPEG** (արտասանվում է «էմ պե երեք» կամ «էմ պեգ»)

MP3, MPEG-ը ձևաչափ (ֆորմատ) է, տեսապատկերման և / կամ ձայնի կոդավորման տեսակ: Ձևաչափը որոշում է ֆայլում պահպանվող տեղեկության տեսակը, այդ ֆայլի համապատասխանությունը զանազան կիրառական ծրագրերին և այլ օգտվողների հետ տվյալների փոխանակման հնարավորությունները:

MP3 ձևաչափը թույլ է տալիս խիստ կրճատել ձայնային ֆայլերի ծավալը՝ պահպանելով պահանջվող որակը:

MPEG բառն օգտագործվում է նաև որպես խտացված տեսաֆայլերի ձևաչափի անվանում: Ինտերնետում գոյություն ունեն երաժշտական մեծաքանակ ժողովածուներ (MP3 պահոցներ), որոնց մեջ բովանդակությունը հիմնականում ժամանակակից փոփ և ռոկ երաժշտություն է, սակայն հանդիպում է նաև դասական և գուսանական երաժշտություն: Սովորաբար MP3 ֆայլերը համացանցում տեղադրում են այս կամ այն երաժշտության սիրահարները, ինչպես նաև կատարողներն ու ձայնագրող ընկերությունները՝ թողարկվող սեղմապնակները գովազդելու նպատակով:

Յուրաքանչյուր ձայնագրությունից հատուկ փոխարկիչ ծրագրերի օգնությամբ կարելի է ստեղծել MP3 ձևաչափի ֆայլ: MP3 ֆայլերը լսելու համար պահանջվում է հատուկ ծրագիր-նվագարկիչ: Ներկայումս այդպիսի ծրագիր մտնում է MS Windows-ի չափանշված մատակարարման մեջ: Բացի դրանից բազմաթիվ նվագարկիչ-ծրագրեր անվճար են, և ինտերնետում հեշտությամբ կարելի է գտնել դրանք:

### **Ներլցնել,բաշել (անգլ. download)**

Ներլցնել նշանակում է սպասարկիչից ֆայլը պատճենել օգտվողի համակարգչի վրա:

### **Նեթիկետ (Net + Etiquette = Netiquette)**

Նեթիկետը համացանցի էթիկետն է: Ինտերնետում էթիկետը գործնականում չի կարգավորվում օրենքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա մեջ ուղղակիորեն կիրառվում են իրական կյանքում գործող օրենքները: Սակայն գոյություն ունեն որոշակի ավանդույթներ և ինտերնետ-ընկերության կուլտուրան, որոնց հետևում է կայքեր ստեղծողների (վեբ վարպետների) և օգտվողների մեծամասնությունը: Այդ չգրված օրենքն էլ անվանում են նեթիկետ, այսինքն՝ «ցանցային էթիկետ» ("net"-ցանց):

### **Որոնման ծրագրեր / համակարգեր (անգլ. search engine)**

Որոնման ծրագիրը ինտերնետում տեղեկություն փնտրելու գործիք է: Երբ օգտվողը հարցադրում է կատարում, հատուկ ծրագիրը (որոնման միջոցի ռոբոտը՝ ավտոմատը) անընդհատ շրջանցում է ցանցը և վեբ էջերից տեղեկություն է հավաքում: Որոնման արդյունք հանդիսանում է որոնման պատասխանը՝ հղումների ցանկը հարցմանը համապատասխանող փաստաթղթերին (վեբ էջեր): Նույն հարցման պատասխանը տարբեր որոնման միջոցներում կարող է նշանակալիորեն տարբերվել:

Որոնման համակարգերը տարբերվում են ըստ իրենց գործունեության ոլորտների՝ տեղային (ազգային տիրույթով, որոշակի լեզվով սահմանափակված) և համընդհանուր: Սովորաբար համընդհանուր որոնման ծրագրերը լավ գործում են համացանցի անգլալեզու մասում (որն իրականում հանդիսանում է համաշխարհային ցանցի զգալի մասը) և ավելի պակաս՝ մնացած մասերում: Այդ պատճառով էլ, եթե ձեր որոնումը խիստ սահմանափակված է երկրով կամ լեզվով, նպատակահարմար է օգտվել տեղային որոնման ծրագրից:

### **Չատ (անգլերենից to chat - շատախոսել)**

Չատն ինտերնետային հաղորդակցում է, որտեղ խոսակցությունն իրական ժամանակի մեջ է տեղի ունենում: Չատի բովանդա-

կության մեջ միայն «այստեղ և հիմա» գոյություն ունի: Այն պատուհանի տեսք ունի, որի միջով անցնում են չատի բոլոր մասնակիցների կողմից ուղարկված հաղորդագրությունները:

Չատում հաղորդակցվելու համար անհրաժեշտ է ընտրել անուն (նիկ), որով դուք «կներկայանաք» նրա մեջ, և հաղորդագրություն ուղարկել, որն անմիջապես կերևա ընդհանուր հոսքում:

Որպես կանոն չատը ոչ թե բանավիճելու միջոց է, այլ երիտասարդական «շաղակրատարան», հաղորդակցվելու տեղ:

### **Պորտալ**

Պորտալը ինտերնետային նշանակությամբ կայք է, որից մարդ սկսում է իր աշխատանքն ինտերնետում: Այլ կերպ ասած՝ այն բրաուզերի մեկնարկային էջն է:

Մեկ այլ բնութագրման համաձայն պորտալը կայք է, որը բավական խոշոր ծավալի տեղեկություններ է միավորում: Պորտալ դառնալու հավակնություն ունեցող յուրաքանչյուր կայք իր մեջ պետք է պարունակի հղումներ դեպի ուրիշ պաշարներ, փոստ, օրացուցային տեղեկույթ և այլն, այսինքն՝ գրավիչ դառնա որքան հնարավոր է մեծաքանակ այցելուների համար: Բառի բուն իմաստով այն մեծաքանակ այցելուներ ունեցող, խոշոր և հայտնի կայք է:

Պորտալները բավական քիչ են գլոբալ, ազգային, ռեգիոնալ մակարդակներից յուրաքանչյուրում՝ դրանք սովորաբար մի քանիսն են:

### **Պրովայդեր (անգլ. provider)**

Պրովայդերը ինտերնետային ծառայություն իրականացնող ընկերություն է, որը տրամադրում է նաև այլ ծառայություններ, օրինակ՝ հոստինգ, e-mail և այլն: Պրովայդերներն առաջարկում են ինտերնետ միացումների տարբեր ձևեր՝ հեռախոսի միջոցով՝ «dial-up», կապի առանձնացված մեծ արագության գծերով՝ այդ թվում օպտիկամալուխային, ռադիոնոդեմային և այլն:

### **Ռուներտ**

Ռուներտը ռուսական ինտերնետն է: Ինտերնետում սովորաբար սահմանները որոշվում են ոչ թե աշխարհագրական հատկանիշներով, այլ լեզվով, այդ պատճառով «ռուներտ» ասելիս հասկանում են

ոչ միայն կայքերը .ru տիրույթում, այլ ուղղակի բոլոր ռուսալեզու և / կամ ռուսական ուղղվածություն ունեցող կայքերը:

**Սերվեր, սպասարկիչ** (անգլ. server, web-server, to serve ծառայել, սպասարկել, հոմանիշը՝ վեբ սերվեր)

«Սպասարկիչ» եզրն օգտագործվում է տարբեր նշանակություններով՝

- տեխնիկական և ծրագրային միջոցներ, որոնք ապահովում են վեբ կայքի աշխատանքը և ինտերնետի անհրաժեշտ ծառայությունների գործունեությունը, ինչպիսին են կայքը, էլեկտրոնային փոստը, ֆորումները և այլն.
- համակարգիչ, որն ապահովում է կայքի աշխատանքը: Սպասարկիչի խնդիրն է կայքի էջերը փոխանցել բրաուզերին:

**Սմայլիկ** (անգլ. smile՝ ժպիտ)

Սմայլիկներ անվանվում են այն պայմանական նշանները, որ կազմված են հույզեր արտահայտող տրոհության նշաններից, տառերից և թվերից: Դրանք լայնորեն օգտագործվում են համացանցում հաղորդակցվելու ժամանակ՝ նամակներում, ֆորումներում և այլն:

Ինտերնետն ուղիղ երկխոսության ռեժիմով հաղորդակցվելու նպատակով հիմնականում գրավոր է կիրառվում: Եվ այն, ինչը հեռախոսային խոսակցության մեջ կարող է արտահայտվել արտասանությամբ, ինտերնետ-հաղորդակցման մեջ արտահայտում են սմայլիկներով:

Ամենատարածված պայմանական նշանը ժպիտն է. այն այսպիսի տեսք ունի՝ ☺ :-)) և նշանակում է, որ հաղորդագրություն ուղարկողն ուրախանում է, զվարճանում կամ կատակում: Սակայն կան նաև բացասական հույզեր արտահայտող սմայլիկներ, օրինակ՝ հուսալքում՝ ☹ :-(( կամ զայրույթ՝ ☹ =:-((

Սմայլիկների բոլոր տարբերակները չենք հիշատակի. համացանցից օգտվելիս ուղղակի դեպի ձախ թեքվե՛ք և սմայլիկին նայելով՝ դուք կհասկանաք, թե ինչ հույզ նկատի ունեի հեղինակը:

**Սպամ, ադք** (անգլ. spam, junk mail, bulk mail)

Սպամը ձեզ անծանոթ մարդկանցից կամ կազմակերպությունից առանց ձեր թույլտվության ուղարկված հաղորդագրությունների

խումբ է: Որպես օրենք՝ սպամը գովազդներ կամ առևտրական առաջարկներ, ինչպես նաև երջանկության նամակներ և այլ բնույթի գրություններ պարունակող զանգվածային առաքում է մեծաթիվ հասցեների: Սովորաբար այդպիսի նամակները անձնական դիմումներ չեն պարունակում, բայց դրա փոխարեն ունեն գրավիչ վերնագրեր, օրինակ՝ «Աշխատավարձ՝ առանց տնից դուրս գալու» կամ «Շտապ...Արտառոց առաջարկություն»: Այս եղանակով ուղարկված տեղեկությունը վստահություն չի ներշնչում:

Սպամը, ինչպես և ինտերնետը, միջազգային երևույթ է: Այդ պատճառով, եթե դուք առաջին անգամ հանկարծ անգլերեն նամակ եք ստացել, գուցե պետք չէ շտապ թարգմանիչ փնտրել՝ շատ հավանական է, որ այն ևս աղբ է:

Աղբաբեր նամակները կարող են «վարակը տարածողներ» լինել, այսինքն տարբեր վիրուսներով ֆայլեր պարունակել: Եթե սպամը նույնիսկ ուղղակի խարդախություն չի հանդիսանում (փոստով ուղարկված գովազդը կարող է լիովին համապատասխանել իրականությանը), այն «գողանում է» ձեր ուշադրությունը, ժամանակը, իսկ հաճախ նաև ուղղակի փողը (օրինակ՝ դուք վճարում եք ինտերնետ մտնելու համար): Հաղորդագրությունների (առավել հաճախ գովազդային կամ կոմերցիոն բովանդակությամբ) կամ բազմաթիվ ցուցակների և համախմբված նորությունների, որոնց թեմատիկան չի համապատասխանում հաղորդագրության բովանդակությանը, առաքումը բազմաթիվ հասցեատերերի, որոնց համար տվյալ հաղորդագրությունը ցանկալի չէ, էթիկետի և համակարգչային ցանցերի կիրառման կանոնների խախտում է համարվում: Սպամն անհրաժեշտ է հեռացնել:

### **Վեր-ինտերֆեյս**

Դա միջոցների ամբողջություն է, որոնց օգնությամբ օգտվողը համագործակցում է վեբ կայքի հետ: Այն անմիջապես օգտվողին ուղղված ծրագրի տեսանելի մասն է:

### **Վիքիփեդիա**

Վիքիփեդիան ինտերնետ-հանրագիտարան է, որի համար հոդվածներ կարող է գրել համացանց մուտք գործող յուրաքանչյուր

մարդ: Այսօր այդ հանրագիտարանը, որն ստեղծվել է ոչ պրոֆեսիոնալ էնցիկլոպեդիստների ինքնակամ խմբային աշխատանքի շնորհիվ, հանրամատչելի և ազատ տարածվող հանրագիտարան է համարվում: (Wiki-wiki-ին փոխառություն է հավայական լեզվից, որ նշանակում է «արագ»):

### **Վիրուսներ**

Վիրուսները ծրագրեր են, որոնք խանգարում են համակարգչի նորմալ աշխատանքը, վերագրանցում են, վնասում կամ հեռացնում տվյալները: Վիրուսով վարակված համակարգիչը կարող է ավելի դանդաղ աշխատել, դադարեցնել աշխատանքը և վերաբեռնավորվել մի քանի րոպեն մեկ. ի հայտ բերել այլ թերություններ:

Վիրուսներից պաշտպանվելու համար անհրաժեշտ է նախագուշակական միջոցներ ձեռք առնել, մասնավորապես համակարգչում տեղադրել հակավիրուսային ծրագրեր և դրանք կանոնավորապես թարմացնել:

### **Տարբերակ տպելու համար**

Տպելու համար տարբերակը կայքերի վրա այնպիսի հղում է, որի միջոցով դուք կընկնեք կայք էջի՝ տպվելիք էջի բովանդակությանն անհամատեղելի դիզայնի տարրերը հեռացրած տարբերակի վրա: Տպելու համար նշանի առկայությունը բնորոշ է ՁԼՄ-ների ինտերնետային կայքերին:

### **Տրաֆիկ**

Տրաֆիկը համացանցի միջոցով փոխանցված տեղեկության ծավալն է: Տրաֆիկը հաճախ բաժանում են մտնողի և դուրս եկողի: Մտնողը ենթադրում է ձեր համակարգչի վրա ստացված տեղեկությունը: Դուրս եկողը համապատասխանաբար հակառակը՝ ուղարկվող տեղեկությունը:

### **Փոստային սերվեր (անգլ. mail server)**

Փոստային սերվերը էլեկտրոնային փոստի սպասարկիչն է, որն ապահովում է էլեկտրոնային փոստ մտնող հաղորդագրությունների դասակարգումը և դուրս եկողների առաքումը:



**Օնլայն** (անգլ. on line)

Օնլայնը աշխատանքային այն ռեժիմն է, երբ ձեր համակարգիչը միացված է Ցանցին, և կապը հաստատված է:

**Օֆլայն** (անգլ. off line )

Օֆլայնը աշխատանքային այն ռեժիմն է, երբ համակարգիչն անջատված է Ցանցից, և կապը խզված է:

**Ֆորում** ( անգլ. www-conference, հոմանիշները՝ խորհրդաժողով, վեբ-խորհրդաժողով)

Ֆորումը հաղորդակցման անկյուն է կայքի վրա: Ֆորումի հաղորդագրություններն ինչ-որ տեղ նման են փոստայինին, նրանցից յուրաքանչյուրն ունի իր հեղինակը, թեման և սեփական բովանդակությունը: Որպեսզի հաղորդագրությունը ֆորում ուղարկեք, լրացուցիչ ծրագիր անհրաժեշտ չէ, պետք է ուղղակի կայքի վրա համապատասխան ձև լրացնել:

Հաղորդագրությունները, որոնք ուղարկվել են ֆորում, կարող են երկար պահպանվել, և պատասխանը կարող է տրվել ֆորումում հարցի ի հայտ գալու ոչ նույն օրը:

Ֆորումի մասնակի դեպքերից է ինտերնետային մամլո ասուլիսը, երբ ժողովը կազմակերպվում է որպես կայքից օգտվողների և հրավիրված մասնակիցների հաղորդակցություն:

**FAQ** (անգլ. Frequently Asked Questions-հաճախ տրվող հարցեր և պատասխաններ)

FAQ-ը հղում է կայքի վրա, որի օգնությամբ անցնում են այն էջ, որտեղ գրանցվում են օգտվողների կողմից հաճախ տրվող հարցերը և պատասխանները:

## **Օգտագործված տեղեկությունների աղբյուրների ցանկը**

1. **Н.И. Гендина, Н.И. Колкова, Г.А. Стародубова, Ю.В.Уленко,-** Формирование информационной культуры личности: теоретическое обоснование и моделирование содержания учебной дисциплины, Москва, 2006.
2. **В.П.Чудинова, Л.Н.Косенко, А.И.Михайлова,-** Дети и библиотека в меняющемся информационном пространстве: оценка «рисков». «Школьная библиотека», февраль, 2006.
3. «Информация для всех» Сборник материалов по формированию детской и юношеской информационной политики: по материалам конференций Программы ЮНЕСКО; в 2 частях. Часть 1, Москва, «Школьная библиотека», 2004
4. Материалы международной конференции «Информационная культура личности: вызовы информационного общества» - Москва, 2 - 3 ноября 2006. [http://confifap.cpic.ru/2006/rus/reports/list\\_2.html](http://confifap.cpic.ru/2006/rus/reports/list_2.html)
5. Газета «Библиотека в школе» №8 2007г.
6. Программа ЮНЕСКО «Информация для всех» [www.unesco.org](http://www.unesco.org); [www.ifap.ru](http://www.ifap.ru)
7. Брошюра “Безопасность детей в Интернете”,- Microsoft <http://www.ifap.ru/library/book099.pdf>
8. «Конвенция о правах ребенка» – [http://-www.contentfiltering.ru/catalog.asp?ob\\_no=894](http://-www.contentfiltering.ru/catalog.asp?ob_no=894)
9. «Окинавская Хартия глобального информационного общества» <http://www.unesco.ru/rus/pages/Admin01122004200114.php>
10. Всемирный Саммит по информационному обществу / Сост.: Е.И. Кузьмин, В. Р. Фирсов.- СПб.: Изд-во РНБ, 2004.

11. Декларация принципов, принятая на Всемирном Саммите по Информационному обществу,- Женева, 2003г. - Тунис 2005 г.

12. Хесус Лау, Председатель Постоянного комитета (2005-2007) Секции ИФЛА по информационной грамотности,- «Руководство по информационной грамотности для образования в течение всей жизни» - <http://www.ifap.ru/library/book101.pdf>

13. Симонян Э. Информационная культура использования электронных ресурсов в детской библиотеке.- Труды конференции LIBCOM-2006, [www.gpntb.ru/libcom6/disk/trud.html](http://www.gpntb.ru/libcom6/disk/trud.html)

## Հանձնարարվող աղբյուրներ

Անվանումը	Հասցեն այս ձեռնարկի հրատարակման պահին
«Նոյյան տապան» լրատվական վերլուծական կենտրոն	<a href="http://www.nt.am/">http://www.nt.am/</a>
Electronic Library Consortium of Armenia	<a href="http://www.elca.am">www.elca.am</a>
Հայաստանի ազգային գրա- պալատ	<a href="http://www.book-chamber.am/">http://www.book-chamber.am/</a>
Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա հայ./ռուս./անգ/	<a href="http://www.sci.am/">http://www.sci.am/</a>
Հայաստանի ազգային գրադարան	<a href="http://www.nla.am">www.nla.am</a>
Армянский центр научно- технической информации	<a href="http://www.acsti.am/">http://www.acsti.am/</a>
Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ	<a href="http://armunicat.am:8991/F">http://armunicat.am:8991/F</a>
Հայաստանի ազգային պատ- կերասրահ	<a href="http://www.gallery.am">www.gallery.am</a>
Virtual Matenadaran	<a href="http://www.matenadaran.am">www.matenadaran.am</a>
Virtual Museum of Komitas	<a href="http://www.komitas.am">www.komitas.am</a>
Հայոց Ցեղասպանությանը նվիրված վեբ կայք (հայ./անգլ.)	<a href="http://www.genocide.am">www.genocide.am</a>
Геноцид армян в Турции: краткий обзор, история, хронология /рус./	<a href="http://www.genocide.ru">www.genocide.ru</a>
Հայաստանի հայտնի անձինք (Известные персоны Армении)	<a href="http://www.persons.am/">http://www.persons.am/</a>
Интернет-сообщество армян, новости культуры и пр.	<a href="http://www.haylife.ru">www.haylife.ru</a>

Հայ գրականություն, հայերե-  
նի ինքնուսույցներ, երգա-  
ցանկ

<http://hayeren.hayastan.com/lit.php>

Հայկական պոեզիա

<http://www.armenianpoetry.com/arm/index.html>

Երեխաների արվեստի  
աշխատանքների  
ցուցահանդես

[www.colours.am](http://www.colours.am)

Մարտիրոս Սարյան

<http://www.saryan.info/>

Հիշելով Վիլյամ Սարոյանին  
Remembering William Saroyan

[www.kalinian-saroyan.com](http://www.kalinian-saroyan.com)

Աղասի Այվազյան

<http://www.aghasi-aivazian.com/>

Հայ առաքելական եկեղեցու  
գրադարան

[www.armenianchurchlibrary.com](http://www.armenianchurchlibrary.com)

Հայ-անգլ. on-line թարգմանիչ

<http://www.translator.am/am/Dictionary.html>

## Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները

Российско-Армянский  
(Славянский) государственный  
университет

<http://www.rau.am/>

Ереванская государственная  
консерватория им. Комитаса  
Երևանի գեղարվեստի  
ակադեմիա

<http://conservatory.am/rus/index.html>

Հայաստանի պետական ճար-  
տարագիտական համալսա-  
րան

[http://www.iatp.am/yafa/english/am\\_index.html](http://www.iatp.am/yafa/english/am_index.html)

<http://www.seua.am/>

Երևանի պետական համալ-  
սարան

<http://www.ysu.am/>

Խ. Աբովյանի անվան  
հայկական պետական  
մանկավարժական  
համալսարան

<http://www.scped.am/>

## Օրաթերթեր

ԱԶԳ

<http://www.azg.am/>

Առավոտ

<http://www.aravot.am/>

Հայոց աշխարհ

<http://www.hayashkharh.am/>

Հայաստանի Հանրապետություն

<http://www.hhpress.am/>

## Շաբաթաթերթեր

Իրավունքը de facto

<http://www.idefacto.am/>

Ավանգարդ

<http://www.avangard.am/>

Голос Армении

<http://www.golos.am/>

Երկիր

<http://www.yerkir.am/>

Չորրորդ իշխանություն

<http://www.chi.am/>

Деловой экспресс

<http://www.express.am/>

Новое время

<http://www.nv.am/>

Եթեր (հայ., ռուս.)

<http://www.eter.am/>

## Էլեկտրոնային թերթեր

Պանորամա

<http://www.panorama.am/>

Տարեգիր

<http://www.taregir.am/>

Լրագիր

<http://www.lragir.am/>

Ա1 +

<http://www.a1plus.am/am>

## Սփյուռքահայ մամուլ

«Անիվ» ամսագիր (Ռուսաստան)

<http://aniv.ru/>

«Ասպարեզ» օրաթերթ (ԱՄՆ)

<http://www.asbarez.com>

«Նոր Մարմարա» օրաթերթ (Թուրքիա)

<http://www.normarmara.com>

«Ալիք» օրաթերթ (Իրան)

<http://alikonline.com/>

«Մասիս» շաբաթաթերթ (ԱՄՆ)

<http://www.masisweekly.com>

«Ակոս» շաբաթաթերթ (Թուրքիա)

<http://www.agos.com.tr>

«Օրեր» (Չեխիա)

<http://www.orer.cz>

## Թանգարաններ, պատկերասրահներ

Эрмитаж	<a href="http://www.hermitagemuseum.org/html_Ru/03/hm3_0.html">http://www.hermitagemuseum.org/html_Ru/03/hm3_0.html</a>
Третьяковская галерея	<a href="http://www.tretyakovgallery.ru">www.tretyakovgallery.ru</a>
Музей радио и телевидения	<a href="http://www.tvmuseum.ru/">http://www.tvmuseum.ru/</a>
Государственный Дарвиновский музей	<a href="http://www.darwin.museum.ru">www.darwin.museum.ru</a>
Музеи России и мира	<a href="http://www.museum.ru/">http://www.museum.ru/</a>

## Գրադարաններ, տեղեկատուներ, երաժշտություն

Библиотека Максима Мошкова	<a href="http://www.lib.ru">www.lib.ru</a>
Библиотека Кирилла и Мефодия	<a href="http://www.lib.km.ru/">http://www.lib.km.ru/</a>
"Альдебаран" - библиотека он-лайн	<a href="http://www.aldebaran.ru">www.aldebaran.ru</a>
Виртуальная библиотека	<a href="http://www.virlib.ru/">http://www.virlib.ru/</a>
Электронная полнотекстовая библиотека	<a href="http://ihtika.net">http://ihtika.net</a>
Журнальный зал: электронная библиотека современных литературных журналов России	<a href="http://magazines.russ.ru/">http://magazines.russ.ru/</a>
Коллекции рефератов	<a href="http://www.zachetka.ru">www.zachetka.ru</a> <a href="http://www.allbest.ru">www.allbest.ru</a> <a href="http://knigi4you.ru">http://knigi4you.ru</a> <a href="http://03student.ru">http://03student.ru</a> <a href="http://www.bankreferatov-5ballov.ru">www.bankreferatov-5ballov.ru</a>
Каталог русских ресурсов - Детская литература	<a href="http://www.list.mail.ru">www.list.mail.ru</a> <a href="http://list.mail.ru/17098/1/0_1_0_1.html">http://list.mail.ru/17098/1/0_1_0_1.html</a>
Интернет- ресурсы для детей:	<a href="http://www.school.edu.ru">http://www.school.edu.ru</a> <a href="http://kids.rin.ru">http://kids.rin.ru</a> <a href="http://www.solnet.ee">http://www.solnet.ee</a> <a href="http://vkids.km.ru">http://vkids.km.ru</a>
Полная энциклопедия Брокгауза и Эфрона	<a href="http://dic.academic.ru/contents.nsf/brokgauz">http://dic.academic.ru/contents.nsf/brokgauz</a>
Википедия – свободная энциклопедия	<a href="http://www.ru.wikipedia.org">www.ru.wikipedia.org</a>
Չիրիփեդիա – ազատ հանրագիտարան	<a href="http://hy.wikipedia.org/wiki/">http://hy.wikipedia.org/wiki/</a>
Крупнейший музыкальный архив	<a href="http://www.mp3.ru/">http://www.mp3.ru/</a>
Поисковик mp3: поиск музыки по всем бесплатным mp3-базам Интернета	<a href="http://www.mp3search.ru/">http://www.mp3search.ru/</a>
Armenian, Russian and Foreign MP3s	<a href="http://www.mp3.am">www.mp3.am</a>

## Անգլալեզու ռեսուրսներ գրադարանավարների համար

American Library Association	<a href="http://ala.org">http://ala.org</a>
Internet Library for Librarians	<a href="http://www.icompany.com/infotriever">http://www.icompany.com/infotriever</a>
Librarian Index for the Internet	<a href="http://lii.org/">http://lii.org/</a>
LibrarySpot	<a href="http://www.libraryspot.com">http://www.libraryspot.com</a>
Resource Shelf	<a href="http://resourceshelf.com">http://resourceshelf.com</a>
Neat New Staff I found on the Net This Week	<a href="http://marylaine.com/neatnew.html">http://marylaine.com/neatnew.html</a>
Librarian Central	<a href="http://librariancentral.blogspot.com/">http://librariancentral.blogspot.com/</a>
Answers.com	<a href="http://www.answers.com/">http://www.answers.com/</a>
RefDesk	<a href="http://www.refdesk.com/">http://www.refdesk.com/</a>
DocuTicker	<a href="http://www.docuticker.com/">http://www.docuticker.com/</a>



## **Բովանդակություն**

<b>Ներածություն .....</b>	<b>3</b>
<b>Ինֆորմացիոն կուլտուրա (ինֆորմացիոն գրագիտություն) .....</b>	<b>6</b>
<b>«Երեխաները և տեղեկությունը» հիմնախնդրին առնչվող երեխայի իրավունքները (համաձայն ՄԱԿ-ի պայմանագրի) .....</b>	<b>9</b>
<b>Ընթերցողների հետ աշխատանքի մեթոդները Հայաստանի ազգային մանկական գրադարանում .....</b>	<b>10</b>
<b>Գրադարանավարի դերը տեղեկատվական գրագիտության (տեղեկատվական մշակույթի) ձևավորման մեջ .....</b>	<b>15</b>
<b>Որոնման ընթացակարգի պլանավորումը .....</b>	<b>18</b>
<b>Որոնման ծրագրեր և գրացուցակներ .....</b>	<b>21</b>
<b>Ստացված տեղեկության քննադատական գնահատականը ..</b>	<b>24</b>
<b>Ինչպե՞ս ձևակերպել հարցումը .....</b>	<b>26</b>
<b>Բուլյան գործանշանների (օպերատորների) օգտագործման օրինակներ .....</b>	<b>28</b>
<b>Մի քանի խորհուրդներ ևս՝ որոնց հետևելով դուք կարող եք ժամանակ խնայել .....</b>	<b>32</b>
<b>Անվտանգությունն ինտերնետում .....</b>	<b>35</b>

<b>Ի՞նչ է վիրուսը .....</b>	<b>39</b>
<b>Վերջաբան .....</b>	<b>41</b>
<b>Եզրերի բառարան .....</b>	<b>42</b>
<b>Օգտագործված տեղեկությունների աղբյուրների ցանկը .....</b>	<b>55</b>
<b>Հանձնարարվող աղբյուրներ .....</b>	<b>57</b>

**Էլեկտրոնային տեղեկատվական  
աղբյուրների օգտագործումը**

**Տեղեկատու-մեթոդական ձեռնարկ  
(ռուս.թարգմ.,լրամշակ. հրատ.)**

**Շարվածքը՝ Գ. Կարապետյան**

**Տպաքանակ՝ 300**

